



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերական սեփականություն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

No 1 (37)

ՄԱՍ
ЧАСТЬ 1

Агентство интеллектуальной собственности
Республики Армения

**ПРОМЫШЛЕННАЯ
СОБСТВЕННОСТЬ**

Официальный бюллетень

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են
հրապարակված 2006 թվականի մարտի 15-ից

Երեւան 2006

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ 1

ԳՅՈՒՏԵՐ	5, 89
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	7, 91
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	31, 113
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	33, 115
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ.....	37, 119
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....	39, 121
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	43
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին	45
ՑՈՒՑԻՉՆԵՐ	73
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	77
ԵՐԿՏԱՌ ԿՈՂԵՐԸ	122

ՄԱՍ 2

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	5
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին	7

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-267 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական
ապահովման բաժին

375010, Երևան, Главный проспект, Дом Правительства 3
Тел. 563-267 отдел приема заявок
Тел. 561-126 отдел информационно-технологического
обеспечения

Internet:<http://www.arnpatent.org>

E-mail: arnpat@cornet.am

СОДЕРЖАНИЕ**ЧАСТЬ 1**

ИЗОБРЕТЕНИЯ	5, 89
Сведения о выданных патентах	7, 91
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ	31, 113
Сведения о выданных патентах	33, 115
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ	37, 119
Сведения о выданных патентах	39, 121
ТОВАРНЫЕ ЗНАКИ	43
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	45
УКАЗАТЕЛИ	73
СООБЩЕНИЯ	77
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ	122

ЧАСТЬ 2

ТОВАРНЫЕ ЗНАКИ	5
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	7

CONTENTS**PART 1**

INVENTIONS
Information on granted patents
UTILITY MODELS
Information on granted patents
INDUSTRIAL DESIGNS
Information on granted patents
TRADE MARKS
Information on registered trade marks and service marks
INDEXES
REPORTS
TWO-LETTER CODES

PART 2

TRADE MARKS
Information on registered trade marks and service marks

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՄՅԿ ST.9 ստանդարտի**

- 11 *արտոնագրի համարը*
- 13 *փաստաթղթի տեսակի կոդը*
 - A1 *Գյուտի հիմնական արտոնագիր*
 - A2 *Գյուտի նախնական արտոնագիր*
 - B2 *Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր*
- 21 *հայտի համարը*
- 22 *հայտի ներկայացման թվականը*
- 23 *լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն*
- 24 *արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը*
- 31 *առաջնային հայտի համարը*
- 32 *առաջնային հայտի ներկայացման թվականը*
- 33 *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը*
- 42 *հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը*
- 44 *գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 45 *գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 51 *միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
- 54 *գյուտի անվանումը*
- 56 *տեղեկատվության աղբյուրներ*
- 57 *գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
- 62 *ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
- 65 *հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը*
- 71 *հայտատուն, երկրի կոդը*
- 72 *գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
- 73 *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
- 74 *արտոնագրային հավատարմատար*
- 85 *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
- 86 *միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը*
- 87 *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը*



Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) (2006) (11) 1684 (13) A2
 A01C 3/00
 A01G 27/00
 (21) P20050098 (22) 13.06.2005
 (42) 11.08.2005
 (71) «Հայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
 (72) Արտյուշա Ջավադի Աղասարյան (AM), Ստեփան Ենոքի Մարգարյան (AM), Գառնիկ Գրիգորի Ալեքսանյան (AM), Սուրեն Էդուարդի Միքայելյան (AM)
 (73) «Հայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երևան, Տերյան 74 (AM)
 (54) Հունուսացվող զանգվածի խոնավացման եղանակ եւ այն իրականացնելու սարք
 (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը, մասնավորապես՝ կենսահումուսի արտադրությանը եւ կարող է օգտագործվել հունուսացվող զանգվածի հավասարաչափ ու պահանջվող չափով խոնավացման գործընթացում:
 Խոնավացման եղանակի համաձայն կազմում են ջրահաշվարկային գրաֆիկ, խոնավաչափ տվիչների միջոցով գրանցում են հունուսացվող զանգվածի ընթացիկ խոնավության մեծությունը, տեղադրում են այն ջրահաշվարկային գրաֆիկի վրա, համեմատում են նախապես հաշվարկված անհրաժեշտ խոնավության մեծության հետ: Գրաֆիկի համապատասխան կորերի միջոցով որոշում են հունուսացվող զանգվածի անհրաժեշտ խոնավության աստիճանը ապահովելու համար պահանջվող ջրի քանակը: Որոշում են ամբարում ջրի քանակը, դրանից հանում են հունուսացվող զանգվածի անհրաժեշտ խոնավությունն ապահովելու համար պահանջվող ջրի քանակը եւ ստացված թիվը սահող հպակի միջոցով սեւեռում են ջրի մակարդակի հանգույցի սանդղակի վրա, որից հետո թողարկում են ջրաճնշիչ պոմպը: Ծակոտախողովակաշարերից ջրի շիթերը հունուսացվող զանգվածը ոռոգում են այնքան ժամանակ, մինչեւ որ ջրի մակարդակի հանգույցի լողանը հավասարի սանդղակի վրա սեւեռված հպակին: Այդ ժամանակ ընդհատվում է պոմպի աշխատանքը, եւ փակվում է ամբարից ջրի ելքի էլեկտրամագնիսական փականը:
 Պարզեցվում է հունուսացվող զանգվածի խոնավացման գործընթացը, բարձրացվում է դրա կառավարման հուսալիությունը, 4 նկ.:

(51) (2006) (11) 1685 (13) A2
 A01C 7/00
 (21) P20050081 (22) 31.05.2005
 (42) 11.08.2005
 (71) «Հայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
 (72) Շավարշ Մացակի Գրիգորյան (AM), Սիմոն Վլադիմիրի Ռաֆայելյան (AM), Մարինե Վաչիկի Մխիթարյան (AM)
 (73) «Հայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երևան, Տերյան 74 (AM)
 (54) Պտուտակրիչային սերմնահան ապարատ
 (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ պտուտակրիչային սերմնահան ապարատներին:
 Պտուտակրիչային սերմնահան ապարատն ունի ելքի անցքով սերմնարկը, դրա տակ տեղադրված ելքի անցք ունեցող կոնաձեւ սերմնատուփ, որի մեջ տեղադրված է պտուտակրիչ, որի պտուտակային թիակի արտաքին տրամագիծը կոնաձեւ է: Սերմնատուփի եւ սերմնարկի միջեւ տեղադրված է կարգավորող սահափական եւ պտուտակրիչի շարժաբեր, որի պտուտակային թիակի քայլը փոփոխական է, փոքրանում է դեպի կոնի փոքր հիմքը: Սերմնատուփի հետին պատի ստորին մասն ունի լրացուցիչ ելքի անցք, ընդ որում, պտուտակրիչի շարժաբերը դարձափոխային է:
 Ապահովվում է տարբեր գծային չափերով սերմերի ցանք, 1 նկ.:

(51) (2006) (11) 1686 (13) A2
 A01G 1/00
 (21) P20050155 (22) 16.08.2005
 (42) 03.10.2005
 (71) Վիգո Արամի Դավթյան (AM)
 (72) Վիգո Արամի Դավթյան (AM), Ժաննա Հովիկի Հովակիմյան (AM)
 (73) Վիգո Արամի Դավթյան, Երևան, Հ. Էմինի 68 (AM)
 (54) Ավելուկի աճեցման եղանակ
 (57) Գյուտը վերաբերում է բանջարաբուծությանը, մասնավորապես՝ ավելուկի աճեցման եղանակներին:
 Ավելուկի առաջին բերքահավաքը կատարում են ծաղկման շրջանում, իսկ երկրորդը՝ սերմերի

հասունացման շրջանում: Ներքելի երրորդ հանգույցի տերեւները թողնում են եւ հանգույցից վերեւ 3 սմ հեռավորության վրա ցողունը հեռացնում են: Կատարում են լրացուցիչ բերքահավաքը 3-4 շաբաթից:

Բարձրացվում է ավելուկի բերքատվությունը:

(51) (2006) (11) 1687 (13) A2
A01G 1/00

(21) P20050143 (22) 04.08.2005

(42) 15.09.2005

(71) Գարեգին Գաբրիելի Գաբրիելյան (AM)

(72) Գարեգին Գաբրիելի Գաբրիելյան (AM), Վիգո Արամի Դավթյան (AM), Ժաննա Յովիկի Յովակիմյան (AM)

(73) Գարեգին Գաբրիելի Գաբրիելյան, Երեւան, Թոթովենցի 11/1, բն. 23 (AM)

(54) Ճակնդեղի աճեցման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է բանջարաբուծությանը, մասնավորապես՝ ճակնդեղի աճեցման եղանակներին:

Համաձայն հայտարկվող եղանակի, պահպանելուց առաջ մայրատունկ արմատապտուղներից 1-2 սմ հեռավորությամբ հեռացնում են փրերը, ձմեռը արմատապտուղները պահպանում են պահեստարանում հաստատուն պայմաններում եւ տնկելուց առաջ հեռացնում են նրանց կենտրոնական բողբոջը, ենթարկում են ջերմամշակմանը 39-42°C ջերմաստիճանի եւ 95-100% խոնավության պայմաններում 2-7 օր: Արմատապտուղները տնկում են քեշ հողի մեջ: Ստանում են փրերի առատ բերք եւ ճակնդեղի արմատապտուղների բարձորակ բերք:

Բարձրացվում է ճակնդեղի արմատապտուղների եւ փրերի բերքատվությունը:

(51) (2006) (11) 1688 (13) A2
A01G 9/00
A01G 13/02

(21) P20050033 (22) 29.03.2005

(42) 12.07.2005

(71) Արտավազդ Աղասիի Երեզյան (AM), Աշոտ Յովհաննեսի Յովհաննիսյան (AM), Արմեն Ֆրեդի Յամբարձումյան (AM)

(72) Արտավազդ Աղասիի Երեզյան (AM), Աշոտ Յովհաննեսի Յովհաննիսյան (AM), Արմեն Ֆրեդի Յամբարձումյան (AM)

(73) Արտավազդ Աղասիի Երեզյան, Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Լինչի 41 (AM), Աշոտ Յովհաննեսի Յովհաննիսյան, Երեւան, Ավան-Առինջ թաղամաս 4/2, բն. 19 (AM), Արմեն Ֆրեդի Յամբարձումյան, Երեւան, Սունդուկյան 15/1, բն. 11 (AM)

(54) Գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման սարք

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը, մասնավորապես՝ մշակաբույսերի աճեցման սարքերին:

Սարքը հողի վրա տեղակայված ջրի տարողություն է, որը պատրաստված է օրգանական հումքից՝ պանելի տեսքով: Սարքն ունի բույսի պաշտպանության հարմարանք եւ դեպի ներքեւ լայնացող կոնաձեւ հիմքով խողովակաձեւ անցքեր բույսերի համար, ընդ որում կոնաձեւ մակերեւույթին արվում են անցքեր բույսերի կաթիլային ոռոգման համար:

Ապահովվում է բույսի ոռոգումը ամբողջ վեգետացիայի ընթացքում:

(51) (2006) (11) 1689 (13) A2
A47J 43/04

(21) P20050105 (22) 17.06.2005

(42) 15.09.2005

(71) Հակոբ Կարապետի Բարսեղյան (AM)

(72) Հակոբ Կարապետի Բարսեղյան (AM)

(73) Հակոբ Կարապետի Բարսեղյան, Գյումրի, Արագածի 6-րդ թաղամաս 2, բն. 11 (AM)

(54) Հարիչ մեքենա

(57) Գյուտը վերաբերում է սննդի պատրաստման սարքերին, մասնավորապես՝ հարիչ մեքենաներին:

Մեքենան ունի ուղղաձիգ իրան, կինեմատիկորեն կապված էլեկտրաշարժիչ, արագությունների տուփ, ռեդուկտոր, մոլորակային մեխանիզմ, որն ունի աշխատանքային լիսեռի սատելիտային ժանանիվ, գլանաձեւ թաս, այն բարձրացնող ու իջեցնող մեխանիզմ, որն ունի ընթացային պտուտակի վրա պտուտակային կառչմամբ տեղադրված թասը կրող բարձակ: Ընթացային պտուտակի ստորին մասը վերին մասի համեմատ ունի ավելի փոքր քայլ եւ պարուրակի հակառակ ուղղություն: Պտուտակային կառչմամբ դրա վրա տեղակայված է երկձիղ լծակի տեսք ունեցող, թասը հորիզոնական առանցքի շուրջը պտտող մեխանիզմ: Լծակի ճյուղավորված ծայրերում

ազատ հազցված են թասի հատակի հետ հպվող անիվներ: Թասն իր ստորին դիրքին հասնելուց հետո, լծակի բարձրացմամբ իրականացվում է թասի աստիճանաբար շրջում 90 աստիճանով: Դեշտացվում է թասի դատարկումը, 3 նկ.:

(51) (2006) (11) 1690 (13) A2
A61B 5/05
A61H 39/00

(21) P20050054 (22) 27.04.2005
(42) 12.07.2005

(71) Վլադիմիր Միքայելի Գասպարյան (AM)
(72) Վլադիմիր Միքայելի Գասպարյան (AM),
Հարություն Բենիկի Հարությունյան (AM), Մաքսիմ
Պավելի Մալկին (UA), Ռաֆիկ Շավարշի Սարգսյան
(AM), Վահրամ Ռաֆայելի Սարգսյան (AM), Գագիկ
Գուրգենի Քարամյան (AM)
(73) Վլադիմիր Միքայելի Գասպարյան (AM)
(74) Ա. Գալոյան

(54) Ակուպունկտուրայի կետերի հետազոտման
եւ դրանց վրա ազդելու սարք
(57) Սարքն ունի չափիչ եւ հենարանային էլեկ-
տրոդներ՝ միացված չափիչ սխեմային, որը պարու-
նակում է անալոգաթվանշանային կերպափոխիչ,
հենարանային լարման աղբյուր եւ նմանակային
ուժեղարար: Սարքը լրացուցիչ ունի ազդանշանի
ոչ ինվազիվ տվիչ եւ թվանշանաանալոգային
կերպափոխիչ, որի մուտքը միացված է ազդա-
նշանի նախնական մշակման բլոկի անալո-
գաթվանշանային կերպափոխիչի ելքին:
Բարձրացվում է հետազոտման արդյունքի
ճշգրտությունը, անկախ չափումների քանակից,
2 նկ.:

(51) (2006) (11) 1691 (13) A2
A61C 8/00

(21) P20050097 (22) 10.06.2005
(42) 11.08.2005

(71) Հայկ Դավթի Ենոքյան (AM), Արմեն Մարտինի
Մարտիրոսյան (AM)
(72) Հայկ Դավթի Ենոքյան (AM), Արմեն Մարտինի
Մարտիրոսյան (AM)
(73) Հայկ Դավթի Ենոքյան, Երեւան, Գալչոյան
55/12, բն. 1ա (AM), Արմեն Մարտինի Մարտիրոսյան,
Երեւան, Շիրակի 13, բն. 28 (AM)

(54) Ատամնային ներոսկրային իմպլանտատ
(57) Իմպլանտատն ունի գլանաձեւ սնամեջ
միջանցիկ ներոսկրային մաս, դրա պարուրակային
անցքում ներդրվող պտուտակ եւ օրթոպեդիկ
կառուցվածքի սեւեռման գլխիկ: Ներոսկրային
մասի պատերը արտաքին եւ ներքին կողմից
փոշեպատված են, ունեն բացվածքներ: Ծնոտային
ոսկրի հետ իմպլանտատի հպումը ապահովվում
է ինչպես դրա արտաքին, այնպես էլ ներքին
մակերեսությամբ:

Նպաստում է ոսկրաինտեգրացիայի գործ-
ընթացին, 6 նկ.:

(51) (2006) (11) 1692 (13) A2
A61C 8/00

(21) P20050112 (22) 22.06.2005
(42) 12.07.2005

(71) Սուրեն Սերգեյի Ավետյան (AM), Արթուր Վլա-
դիմիրի Պապիկյան (AM), Գեղամ Ռաֆիկի Սահակյան
(AM), Արմեն Մարտինի Մարտիրոսյան (AM)
(72) Սուրեն Սերգեյի Ավետյան (AM), Արթուր Վլա-
դիմիրի Պապիկյան (AM), Գեղամ Ռաֆիկի Սահակյան
(AM), Արմեն Մարտինի Մարտիրոսյան (AM)
(73) Սուրեն Սերգեյի Ավետյան, Երեւան, Հր.
Քոչարի 24, բն. 29 (AM), Արթուր Վլադիմիրի
Պապիկյան, Երեւան, Կյուլպենկյան 40, բն. 55
(AM), Գեղամ Ռաֆիկի Սահակյան, Երեւան, Թու-
մանյան 9ա, բն. 70 (AM), Արմեն Մարտինի Մար-
տիրոսյան, Երեւան, Շիրակի 13, բն. 28 (AM)
(54) Ենթավերնոսկրային իմպլանտատ
(57) Գյուլոտը վերաբերում է ստոմատոլոգիային
եւ կարող է կիրառվել մասնակի եւ լրիվ անատա-
մոլային բուժման համար:

Իմպլանտատն ունի կորալտաքրոմային հա-
մաձուլվածքից պատրաստված հենարանային
տարր, վզիկ եւ կոնաձեւ գլխիկ: Գլխիկը պատ-
րաստված է տիտանից եւ ունի առանցքային
պարուրակային անցք՝ ատամնային պրոթեզների
ամրացման համար: Հենարանային տարրն
ու վզիկը ծածկված են ալյումինի (III) օքսիդի
շերտով:

Լայնացվում են իմպլանտատի ֆունկցիոնալ
հնարավորությունները, բարձրացվում է բուժման
արդյունավետությունը, 2 նկ.:

- (51) (2006) (11) 1693 (13) A2
A61K 35/78
- (21) P20050094 (22) 09.06.2005
(42) 12.07.2005
(71) «Ճառագայթային ուռուցքաբանության եւ ռադիոլոգիայի հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն (AM)
(72) Ներսես Սամվելի Քարամյան (AM), Սամվել Կարապետի Քարամյան (AM), Թաթուլ Շոպենի Սաղաթեյան (AM), Հակոբ Բագրատի Ֆիչիջյան (AM), Անահիտ Կոնստանտինի Ներսիսյան (AM), Լուսինե Մարտինի Մուրադյան (AM)
(73) «Ճառագայթային ուռուցքաբանության եւ ռադիոլոգիայի հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն, Երեւան, Շարուրի 17, բն. 27 (AM)
(54) Հակամուկոզիտային բուսաբուժական պատրաստուկ եւ ուռուցքաբանական հիվանդների մոտ ճառագայթաբուժության հետեւանքով առաջացող վերին շնչուղիների եւ մարսողական ուղու վերին հատվածների լորձաթաղանթների փոփոխությունների կանխարգելման եւ/կամ բուժման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է հակամուկոզիտային պատրաստուկներին եւ կարող է կիրառվել ուռուցքաբանական հիվանդների մոտ ճառագայթաբուժության հետեւանքով առաջացող վերին շնչուղիների եւ մարսողական ուղու վերին հատվածների լորձաթաղանթների փոփոխությունների կանխարգելման եւ/կամ բուժման համար:
Հայտարկվում է պատրաստուկ, որը ներառում է երկմեթիլսուլֆոքսիդի 25%-ոց ջրային լուծույթ, վաղեմակ ամոքիչի եւ սրոհունդ սովորականի ոգեթուրմերը՝ բաղադրամասերի 8:1:1 հարաբերակցությամբ:
Պատրաստուկը հիվանդին նշանակում են ողողումների եւ/կամ ինհալյացիաների ձեւով, ընդ որում կանխարգելման համար նշանակում են 1 անգամ, իսկ բուժման համար՝ 2 անգամ:
Ընդլայնվում է հակամուկոզիտային պատրաստուկների տեսականին, բարձրանում է բուժման եւ/կամ կանխարգելման արդյունավետությունը, 2 անկախ կետ:
- (21) P20050095 (22) 09.06.2005
(42) 12.07.2005
(71) «Ճառագայթային ուռուցքաբանության եւ ռադիոլոգիայի հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն (AM)
(72) Սամվել Կարապետի Քարամյան (AM), Ներսես Սամվելի Քարամյան (AM), Թաթուլ Շոպենի Սաղաթեյան (AM), Անդրեյ Սերգեյի Մինասյանց (AM), Լուսինե Մարտինի Մուրադյան (AM), Արմինե Հայկարամի Պողոսյան (AM)
(73) «Ճառագայթային ուռուցքաբանության եւ ռադիոլոգիայի հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն, Երեւան, Շարուրի 17, բն. 27 (AM)
(54) Հակամաշկաբորբային բուսաբուժական պատրաստուկ եւ սուր ճառագայթային մաշկաբորբի բուժման եւ/կամ կանխարգելման եղանակ
(57) Հայտարկվում է դեղագործական պատրաստուկ ճառագայթաբուժության հետեւանքով առաջացող մաշկային փոփոխությունների բուժման եւ/կամ կանխարգելման համար, որը ներառում է ծիծեռնախոտ մեծ եւ եղինջ երկտուն բույսերի մանրացված թարմ վերգետնյա մասերի եւ վաղեմակ ամոքիչի թարմ ծաղիկների յուղային լուծամզների խառնուրդ, համապատասխանաբար՝ բաղադրամասերի 1:(1-1,5):(1-1,5) հարաբերակցությամբ:
Ճառագայթաբուժության ողջ կուրսի ընթացքում հիվանդին նշանակում են հայտարկվող պատրաստուկը, որն օգտագործում են մաշկի ճառագայթվող հատվածին ձեռքով քսելու ձեւով, ճառագայթման յուրաքանչյուր սեսանսից հետո, օրական 1 անգամ, 2-5մլ՝ կախված ճառագայթվող մակերեսի չափերից:
Ընդլայնվում է ճառագայթաբուժության հետեւանքով առաջացող մաշկային փոփոխությունների բուժման եւ/կամ կանխարգելման դեղագործական պատրաստուկների տեսականին, բարձրացվում է բուժման եւ/կամ կանխարգելման արդյունավետությունը (2 անկախ կետ):

(51) (2006) (11) 1694 (13) A2
A61K 36/00
A61B 17/00

(51) (2006) (11) 1695 (13) A2
A61K 36/00
A61B 17/00

(21) P20050096 (22) 09.06.2005
 (42) 12.07.2005
 (71) «Ճառագայթային ուռուցքաբանության եւ ռադիոլոգիայի հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն (AM)
 (72) Սամվել Կարապետի Քարամյան (AM), Յայրապետ Մեսրոպի Գալստյան (AM), Թաթուլ Շոպենի Սաղաթելյան (AM), Ներսես Սամվելի Քարամյան (AM), Սմբատ Արտաշեսի Գրիգորյան (AM), Յակոբ Բագրատի Ֆիչիջյան (AM)
 (73) «Ճառագայթային ուռուցքաբանության եւ ռադիոլոգիայի հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն, Երեւան, Շարուրի 17, բն. 27 (AM)
 (54) Լեյկոպոետիկ ակտիվություն ունեցող պատրաստուկ եւ բազմաքիմիաբուժության եւ ճառագայթաբուժության հետեւանքով առաջացած արյունաբանական փոփոխությունների բուժման եւ/կամ կանխարգելման եղանակ
 (57) Յայտարկվում է լեյկոպոետիկ ակտիվություն ունեցող դեղագործական պատրաստուկ ճառագայթաբուժության եւ բազմաքիմիաբուժության հետեւանքով հիվանդների մոտ առաջացած արյունաբանական փոփոխությունների կանխարգելման եւ/կամ բուժման համար, որը ներառում է իշառվույտ ամոքիչի վերգետնյա մասի, վաղենակ ամոքիչի ծաղիկների, եղինջ երկտան վերգետնյա մասի, ծիծեռնախոտ մեծի վերգետնյա մասի՝ չորացված եւ մինչեւ 0,5սմ մանրացված խառնուրդ, համապատասխանաբար՝ բաղադրամասերի 2:1:1:0,5 հարաբերակցությամբ:
 Յիվանդին նշանակում են պատրաստուկը, որն օգտագործում են թարմ ջրաթուրմի ձեւով՝ խառնուրդի եւ ջրի (1-1,5):20 հարաբերակցությամբ, օրական երեք անգամ 70մլ դեղաչափով, ուտելու հետ միաժամանակ, ճառագայթաբուժության ողջ կուրսի ընթացքում: Միաժամանակ հիվանդին քնելուց առաջ նշանակում են օրական 250մլ ոչ ալկոհոլային գարեջուր, օրինակ՝ «Կոտայք» գարեջուրը:
 Ընդլայնվում է լեյկոպոետիկ ակտիվություն ունեցող դեղագործական պատրաստուկների տեսականին, բարձրացվում է բուժման եւ/կամ կանխարգելման արդյունավետությունը (2 անկախ կետ):

(51) (2006) (11) 1696 (13) A2
 A61K 38/04
 (21) P20050113 (22) 24.06.2005
 (42) 11.08.2005
 (71) Արմեն Անուշավանի Գալոյան (AM), Աշխեն Յուրիի Շիրվանյան (AM)
 (72) Արմեն Անուշավանի Գալոյան (AM), Աշխեն Յուրիի Շիրվանյան (AM)
 (73) Արմեն Անուշավանի Գալոյան, Երեւան, Եզնիկ Կողբացու 2ա, բն. 66 (AM), Աշխեն Յուրիի Շիրվանյան, Երեւան, Գայի 53, բն.12 (AM)
 (54) Խոշոր եղջյուրավոր անասունների լեյկոզի բուժման եւ/կամ կանխարգելման եղանակ
 (57) Գյուտը վերաբերում է անասնաբուժությանը, մասնավորապես՝ խոշոր եղջյուրավոր անասունների լեյկոզների բուժման եւ/կամ կանխարգելման եղանակներին:
 Լեյկոզով հիվանդ անասուններին ներերակային ներմուծում են պեպտիդային բնույթի պատրաստուկ, որն ունի Ala-Gly-Ala-Pro-Glu-Pro-Ala-Glu-Pro-Ala-Gln-Pro-Gly-Val-Tyr ամինաթթուների մնացորդներից կազմված հաջորդականություն: Պատրաստուկը 2մլ դեղաչափով (1մլ ֆիզիոլոգիական լուծույթում՝ 1,57x10⁻⁴ գ պեպտիդ) ներարկում են 450-500կգ կենդանի քաշ ունեցող անասուններին 2 անգամ 48 ժամ ընդմիջումով:
 Բարձրացվում է լեյկոզով հիվանդ խոշոր եղջյուրավոր անասունների բուժման արդյունավետությունը:

(51) (2006) (11) 1697 (13) A2
 B02B 3/00
 (21) P20050046 (22) 14.04.2005
 (42) 12.07.2005
 (71) «Յայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առետրային կազմակերպություն (AM)
 (72) Դանիել Պետրոսի Պետրոսյան (AM), Սամվել Վարդանի Յովհաննիսյան (AM), Յենրիկ Գրիգորիի Մանասարյան (AM)
 (73) «Յայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առետրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 74 (AM)
 (54) Յատիկի մշակման մեքենա
 (57) Գյուտը վերաբերում է ծավարեղենի արտադրության տեխնոլոգիական սարքավորումներին, մասնավորապես՝ ցորենի եւ գարու հատիկների թեփահանման եւ հղկման մեքենաներին:

Մեքսեան ունի իրան, բեռնման հարմարանք: Իրանի ներսում տեղակայված է գլանաձև մաղ, որի ներսում համառանցք տեղակայված է սնամեջ լիսեռ՝ իր վրա ամրակցված հղկաքարերով: Հղկաքարերն ափսեաձև են: Մեքեան ունի նաև ելքի կարգավորման փական ունեցող հատիկի բեռնաթափման կարճախողովակ, թեփի հեռացման կարճախողովակ:

Բարձրացվում է մեքեայի արտադրողականությունը, մեծացվում աշխատանքի հուսալիությունը, 1 նկ.:

- (51) (2006) (11) 1698 (13) A2
B08B 9/08
- (21) P20050016 (22) 23.02.2005
- (42) 12.07.2005
- (31) 10 2004 010157.4 (32) 27.02.2004 (33) DE
10 2004 013304.2 18.03.2004 DE
- (71) ԷՌ Դուբլվե Ե Նուբեմ ԳմբՀ (DE)
- (72) Դր. Բերնհարդ Խրիստ (DE), Հոլգեր Վիթինգ (DE), Ռոնալդ Ռիք (DE)
- (73) ԷՌ Դուբլվե Ե Նուբեմ ԳմբՀ (DE)
- (74) Հ. Դավթյան
- (54) Ցիստեռնից նստվածքի հեռացման կայանք եւ եղանակ
- (57) Հայտարկվում են ցիստեռնից նստվածքի հեռացման կայանք եւ եղանակ՝ նստվածքի վրա կուտակված հեղուկի առկայության դեպքում: Կայանքն ունի ցիստեռնի վերին պատի անցքով ցիստեռնի մեջ հավաքված վիճակում ներդրված տեղաշարժվելու հնարավորություն ունեցող շարժասայլակ: Շարժասայլակն ունի հեղուկ մղող առնվազն մեկ ծայրափողակ, որը նստվածքի վրա կուտակված հեղուկի հաստաշերտի մեջ տեղադրված պոմպի միջոցով կապված է հեղուկի մատուցման աղբյուրի հետ: Շարժասայլակն ունի նաև ցիստեռնից հեղուկի եւ նստվածքի մասնիկների խառնուրդը հեռացնող արտածօխչ: Կայանքն ունի մատուցվող հեղուկի տաքացման ու ջերմաստիճանի կարգավորման սարք եւ/կամ հեղուկի pH-ի մեծությունը կարգավորող սարք: Ցիստեռնի վերին պատի անցքի վերելում տեղադրված է «տաք խուց», որի միջից անցքով անցնում է շարժասայլակի հետ կապված ձգող հարմարանքը՝ շարժասայլակը անցքի միջով ցիստեռնի մեջ ներդնելը եւ ցիստեռնից դուրս հանելը իրականացնելու համար:

Պարզեցվում է ցիստեռնից նստվածքի հեռացումը, 2 անկախ կետ, 12 նկ.:

- (51) (2006) (11) 1699 (13) A2
B23B 27/16
- (21) P20050132 (22) 20.07.2005
- (42) 11.08.2005
- (71) Ալեքսան Արզումանյան (AM), Հովհաննես Մանուկյան (AM)
- (72) Ալեքսան Արզումանյան (AM), Հովհաննես Մանուկյան (AM)
- (73) Ալեքսան Արզումանյան, Գյումրի, Սելյան 47, բն. 5 (AM), Հովհաննես Մանուկյան, Գյումրի, Շիրակացու 66 ա, բն. 45 (AM)
- (54) Մաքրամշակման կտրիչազլխիկ
- (57) Գյուտը վերաբերում է մեքեաշինության ու սարքաշինության բնագավառներին եւ կարող է օգտագործվել մետաղական նյութերի նրբատաշ, ինչպես նաև գեղազարդային նյութերի խրոմով մշակման համար:

Մաքրամշակման կտրիչազլխիկն ունի ճարմանդաձև իրան իր բռնիչով, որի փորվածքի հակադիր հարթությունները զուգահեռ են միմյանց: Փորվածքը հաղորդակցվում է բազավորման անցքի հետ ճարմանդաձև իրանի ճեղքի միջոցով, որն անցնում է իրանի համաչափության առանցքով, ընդ որում բռնիչի փորվածքի հակադիր հարթությունները եւ ճարմանդաձև իրանի ճեղքը զուգահեռ են իրանի հիմքի հարթությանը: Կտրող թիթեղիկը փորվածքում ամրացվում է Ս-աձև հարթ զսպանակի օգնությամբ, որը սեւեռվում է բռնիչի արտաքին մակերեսային վրա արված ակոսների մեջ:

Պարզեցվում է կտրող թիթեղիկի բռնիչի փորվածքում ամրացման սխեման, բարձրացվում է կառուցվածքի հուսալիությունը, 5 նկ.:

- (51) (2006) (11) 1700 (13) A2
B24B 13/00
- (21) P20050051 (22) 22.04.2005
- (42) 12.07.2005
- (71) Ալեքսան Մկրտչի Արզումանյան (AM)
- (72) Ալեքսան Մկրտչի Արզումանյան (AM)
- (73) Ալեքսան Մկրտչի Արզումանյան, Գյումրի, Սելյան 47, բն. 5 (AM)
- (54) Գնդաձև մակերեսային մշակման եղանակ
- (57) Ըստ եղանակի՝ պտտվող նախապատրաստվածքը մշակում են պտտվող գործիքով՝ ալմաստային գնդաձև սղոցով: Նախապատրաստվածքը մշակում են ըստ օղակաձև մակերեսային, որը գտնվում է ստացվող գնդաձև մակերեսային հարթության վրա, ընդ որում մշակման գործընթացը

շարունակում են մինչև սղոցի եզրակետը նախապատրաստվածքի պտտման առանցքին հասնելը:

Բարձրացվում է գնդաձեւ մակերեւույթի նախնական մշակման ճշգրտությունը, 1 նկ.:

(51) (2006) (11) 1701 (13) A2
B60L 8/00
B63H 19/00

(21) P20050045 (22) 13.04.2005
(42) 12.07.2005

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Ռուբեն Ռաֆիկի Վարդանյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երևան, Տերյան 105 (AM)

(54) Արեգակնային մարտկոցներով աշխատող նավ

(57) Գյուտը վերաբերում է էկոլոգիապես մաքուր տրանսպորտային միջոցներին, որոնց էլեկտրասնուցման աղբյուրն արեգակն է, եւ, մասնավորապես, կարող է օգտագործվել ջրային տրանսպորտի, օրինակ՝ կատամարանի տիպի շարժիչների սնուցման համար:

Կատամարանի տիպի նավն ունի լողաններ, տախտակամած, ուղեւորատեղեր եւ արեգակնային էներգիայի լուսաէլեկտրական կերպափոխիչների մարտկոցներ, որոնք տեղաբաշխված են լողանների եւ տախտակամածի վրա: Նավի տախտակամածին կոշտ ամրակցված են հենարանային կանգնակներ, որոնց միջոցով ամրացված է ուղեւորատեղերի վրանածածկը: Վրանածածկի մակերեւույթին տեղակայված են լուսաէլեկտրական կերպափոխիչների արեգակնային մարտկոցներ:

Մեծացվում են նավի հզորությունը եւ արագությունը, 1 նկ.:

(51) (2006) (11) 1702 (13) A2
B63B 1/00
B63B 35/58

(21) P20050111 (22) 21.06.2005
(42) 11.08.2005

(71) Հրանտ Ազիզբեկյան (AM)

(72) Հրանտ Ազիզբեկյան (AM), Հրայր Ազիզբեկյան (AM)

(73) Հրանտ Ազիզբեկյան, Երևան, Հանրապետության 51, բն. 6 (AM)

(54) Առազաստանավ եւ դրա կառավարման եղանակ

(57) Առազաստանավն ունի իրար միակցված ողնաձողեր, կայմ, հակակայմ, առազաստներ, ղեկ եւ լողաններ: Բոլոր ողնաձողերը հողակցված են իրար եւ ձգված են ճոպաններով՝ կազմելով կոշտ բուրգածեւ կառույց, որը հենված է հիմքի անկյուններում շարժուն ամրակցված լողանների վրա: Գյուտի համաձայն առազաստները տեղակայված են առազաստանավի լայնքով՝ թեք իրար նկատմամբ: Ղեկն իրականացված է լողաններից անջատվելու հնարավորությամբ՝ լողանների ինքնակողմնորոշման համար:

Առազաստանավի կառավարումը կատարում են լողանի պտտումով: Ըստ հայտարկվող եղանակի ղեկի միջոցով կառավարում են նավի շարժման ուղղությունը եւ առազաստների դիրքը՝ պտտելով միաժամանակ տարբեր ուղղություններով երկու հանդիպակաց լողաններ:

Ապահովվում է առազաստանավի մեծ կայունություն, շարժման մեծ արագություն եւ կառավարման հարմարավետություն, 2 անկախ կետ, 3 նկ.:

(51) (2006) (11) 1703 (13) A2
B64C 9/00

(21) P20050072 (22) 20.05.2005
(42) 12.07.2005

(71) Գեւորգ Գրիգորի Մարտիրոսյան (AM), Վլադիմիր Հակոբի Պողոսյան (AM), Համլետ Լեւոնի Հովհաննիսյան (AM)

(72) Գեւորգ Գրիգորի Մարտիրոսյան (AM), Վլադիմիր Հակոբի Պողոսյան (AM), Համլետ Լեւոնի Հովհաննիսյան (AM)

(73) Գեւորգ Գրիգորի Մարտիրոսյան, Երևան, Կյուլպենկյան 2, բն.28 (AM), Վլադիմիր Հակոբի Պողոսյան, Երևան, Անդրանիկի 42, բն. 23 (AM), Համլետ Լեւոնի Հովհաննիսյան, Արարատի մարզ, Արբաթ (AM)

(54) Էլեկտրոնների կառավարման համակարգ

(57) Էլեկտրոնների կառավարման համակարգը, որը էլեկտրոնային բլոկով կառավարվող հիդրավլիկական համակարգ է, ունի էլեկտրոնային բլոկի մուտքին միացված ավտոմատ կառավարման ազդանշանների հանգույց, ձեռքի կառավարման ազդանշանների հանգույց եւ զգուշացնող ազդանշանների հանգույց, իսկ ելքը միացված է ազդանշաններով կառավարվող ծախ եւ աջ

էլեկտրոններին: Համակարգն ունի լրացուցիչ հանգույց, որը կազմված է տրամաբանական «ԿԱՍ» տարրից եւ անջատիչից, ընդ որում տրամաբանական տարրը միացված է զգուշացնող ազդանշանների հանգույցին, անջատիչի հպակներից մեկը միացված է օդաչուի խցիկում տեղադրված սեղմակին, իսկ մյուսը՝ էլեկտրոնային բլոկի գուճարման տարրին:

Բարելավվում է ինքնաթիռի կառավարման համակարգը, եւ բարձրացվում է օդանավի արգելական համակարգի արդյունավետությունը, 3 նկ.:

(51) (2006) (11) 1704 (13) A2
B64D 9/00

(21) P20050032 (22) 29.03.2005
(42) 13.06.2005

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն (AM)

(72) Եգոր Արտավազդի Համբարյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Գրոհիչ ինքնաթիռները ծանր փոխադրական ինքնաթիռներում բեռնելու եղանակ

(57) Ծանր փոխադրական ինքնաթիռների բեռնման ընթացքում օգտագործում են էստակադ: Նախքան էստակադին բարձրացնելը տեղափոխվող օդանավում շասսիի հիմնական հենակների մեղմիչներով ցածր ճնշման խցիկներում ազոտի ճնշումը իջեցնում են մինչեւ 5-10 կԳ/սմ²: Բերված օրինակում որպես գրոհիչ ինքնաթիռ Սու-25S-ն կամ Սու-25ՈՒԲ-ն է, իսկ որպես ծանր փոխադրական ինքնաթիռ՝ Ան-22-ը կամ Ան-124-ը:

Ապահովվում է աշխատատարության նվազեցում բեռնման տեւողության եւ ծախսերի կրճատման շնորհիվ, 1 նկ.:

(51) (2006) (11) 1705 (13) A2
C01F 7/00

(21) P20050106 (22) 20.06.2005
(42) 03.10.2005

(71) «ՀՀ ԳԱԱ Ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առեւտրային կազմակերպություն (AM)

(72) Նշան Հովհաննեսի Ջուլումյան (AM), Աղասի Ռազմիկի Թորոսյան (AM), Աննա Ռաֆայելի Իսահակյան (AM), Ջարուհի Հայկի Հովհաննիսյան (AM)

(73) «ՀՀ ԳԱԱ Ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, Երեւան, Արդուբյան փող. 2-րդ նրբ. 10 (AM)

(54) Կորունդասիլիցիումային նանոկոմպոզիտային նյութի ստացման եղանակ

(57) Կորունդասիլիցիումային նանոկոմպոզիտային նյութը կարելի է օգտագործել հղկող փոշիներ, կախույթներ, մածուկներ, տարբեր բարձրակայուն տեխնիկական խեցեղեն, հղկող գործիքներ պատրաստելիս:

Կորունդասիլիցիումային նանոկոմպոզիտային նյութը ստանում են պինդ ֆազային փոխազդեցությամբ: Սերպենտինիտից ստացված ակվասիլիկաժելը եւ այլումինի փոշու խառնուրդը ենթարկում են մեխանիկական ակտիվացման 2-3 ժամվա ընթացքում, ապա ենթարկում ջերմային մշակման 450-500°C ջերմաստիճանում:

Ստացվում է ալֆա-կորունդասիլիցիումային նանոկոմպոզիտային նյութ, 2 նկ.:

(51) (2006) (11) 1706 (13) A2
C02F 1/28

(21) P20050122 (22) 08.07.2005
(42) 15.09.2005

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն (AM)

(72) Գագիկ Ցոլակի Վարդերեսյան (AM), Էլինա Էդուարդի Անտոնյան (AM), Կարապետ Ծերունի Թահմազյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Նավթանյութեր պարունակող հոսքաջրերի մաքրման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է բնապահպանության բնագավառին, մասնավորապես՝ նավթանյութեր պարունակող հոսքաջրերի մաքրման եղանակներին:

Մաքրումը կատարում են կլանիչով՝ ձեւափոխված փքած պեռլիտով: Որպես ձեւափոխված փքած պեռլիտ օգտագործում են բենտոնիտով ձեւափոխված փքած պեռլիտը:

Ապահովվում է մաքրման բարձր արդյունավետությունը, 2 նկ.:

(51) (2006) (11) 1707 (13) A2
C03C 8/00
(21) P20050089 (22) 02.06.2005
(42) 12.07.2005
(71) «Արմիտ-Դիամոնդ» ՍՊԸ (AM)
(72) Լեւոն Մամիկոնի Մակարյան (AM), Արամ Լեւոնի Մակարյան (AM), Ռոզա Արեգի Ղազարյան (AM), Յեղուշ Անտոնի Գոգինյան (AM), Ռոբերտ Անդրանիկի Յովհաննիսյան (AM), Գալերիկ Բենիամինի Շեկյան (AM)
(73) «Արմիտ Դիամոնդ» ՍՊԸ, Կոտայքի մարզ, քաղաք Բյուրեղավան (AM)
(54) Արծնային ծածկաշերտի պատրաստման լուծախմոր
(57) Գյուտը վերաբերում է ծածկաշերտի պատրաստման բաղադրանյութերին եւ կարող է օգտագործվել մետաղական եւ գեղարվեստական իրերը արծնային ծածկույթով պատելու, ինչպես նաեւ արծնային ծածկաշերտերի վնասվածքների վերականգնման համար:
Լուծախմորը ներառում է հետեւյալ բաղադրամասերը, զանգվ.%.
արծնային փոշենման չոր բովախառնուրդ՝ 20-70, քարամշակման շլամ՝ 10-30, բնական անօրգանական լցանյութ՝ 10-20, կապակցանյութ՝ 10-30:
Ապահովվում է արծնային ծածկաշերտի քերամաշեփուքյան իջեցումը եւ հարվածական ամրության մեծացումը:

(51) (2006) (11) 1708 (13) A2
C03C 8/00
C03C 8/16
C04B 41/86
(21) P20050088 (22) 02.06.2005
(42) 12.07.2005
(71) «Արմիտ-Դիամոնդ» ՍՊԸ (AM)
(72) Լեւոն Մամիկոնի Մակարյան (AM), Արամ Լեւոնի Մակարյան (AM), Ռոզա Արեգի Ղազարյան (AM), Յեղուշ Անտոնի Գոգինյան (AM), Ռոբերտ Անդրանիկի Յովհաննիսյան (AM), Գալերիկ Բենիամինի Շեկյան (AM)
(73) «Արմիտ Դիամոնդ» ՍՊԸ, Կոտայքի մարզ, քաղաք Բյուրեղավան (AM)
(54) Ջնարակային ծածկաշերտի պատրաստման լուծախմոր
(57) Գյուտը վերաբերում է շինանյութերի արտադրությանը եւ կարող է օգտագործվել երեսպատման սալիկների, ինչպես նաեւ խեցեղեն եւ ապակե իրերի ջնարակային ծածկաշերտի պատրաստման համար:
Լուծախմորը ներառում է հետեւյալ բաղադրամասերը, զանգվ.%.
քարամշակման շլամ՝ 10 – 40, ապակու ջարդոն՝ 44.5 – 55, հեղուկ ապակի՝ 15 – 25, գունանյութ՝ 0,5 – 10:
Իջեցվում է ջնարակային ծածկաշերտի քերամաշեփուքյունը, մեծացվում է հարվածական ամրությունը:

ման սալիկների, ինչպես նաեւ խեցեղեն եւ ապակե իրերի ջնարակային ծածկաշերտի պատրաստման համար:

Լուծախմորը ներառում է հետեւյալ բաղադրամասերը, զանգվ.%.
քարամշակման շլամ՝ 10 – 40, ապակու ջարդոն՝ 44.5 – 55, հեղուկ ապակի՝ 15 – 25, գունանյութ՝ 0,5 – 10:

Իջեցվում է ջնարակային ծածկաշերտի քերամաշեփուքյունը, մեծացվում է հարվածական ամրությունը:

(51) (2006) (11) 1709 (13) A2
C04B 9/02
(21) P20050076 (22) 23.05.2005
(42) 13.06.2005
(71) «Արմիտ-Դիամոնդ» ՍՊԸ (AM)
(72) Լեւոն Մամիկոնի Մակարյան (AM), Արամ Լեւոնի Մակարյան (AM), Ռոզա Արեգի Ղազարյան (AM), Յեղուշ Անտոնի Գոգինյան (AM), Ռոբերտ Անդրանիկի Յովհաննիսյան (AM), Գալերիկ Բենիամինի Շեկյան (AM)
(73) «Արմիտ-Դիամոնդ» ՍՊԸ, Կոտայքի մարզ, ք. Բյուրեղավան (AM)
(54) Մագնեզիումային բաղադրանյութ
(57) Գյուտը վերաբերում է շինանյութերի արտադրության բնագավառին, մասնավորապես՝ մագնեզիումային բաղադրանյութերին: Կարող է օգտագործվել արհեստական քարե սալիկների, անկար հատակների, էլեկտրաջեռուցիչ ջերմամեկուսիչ սալիկների պատրաստման համար, ինչպես նաեւ որպես կապակցանյութ, սոսինձ եւ մածուկ:

Բաղադրանյութը պարունակում է բաղադրամասեր հետեւյալ հարաբերակցությամբ՝ զանգվ.%.
կաուստիկ մագնեզիտ՝ 10-40, մագնեզիումի քլորիդի ջրային լուծույթ՝ 10-40, քարամշակման շլամ՝ 10-30, անօրգանական լցանյութ՝ 5-20, պնդացման արագարար՝ 4-10, մակերեւութաակտիվ նյութ՝ 0,5-10, գունանյութ՝ 0,5-10:

Բարձրացվում է բաղադրանյութի ամրությունը եւ ջրակայունությունը, իջեցվում է քերամաշեփուքյունը:

(51) (2006) (11) 1710 (13) A2
C04B 28/00
(21) P20050077 (22) 23.05.2005
(42) 13.06.2005

(71) «Արմիտ-Դիամոնդ» ՍՊԸ (AM)
 (72) Լեւոն Սամիկոնի Մակարյան (AM), Արամ Լեւոնի Մակարյան (AM), Ռոզա Արեգի Ղազարյան (AM), Յեղուշ Անտոնի Գոգինյան (AM), Ռոբերտ Անդրանիկի Յովհաննիսյան (AM), Գալերիկ Բենիամինի Շեկյան (AM)
 (73) «Արմիտ-Դիամոնդ» ՍՊԸ, Կոտայքի մարզ, քաղաք Բյուրեղավան (AM)
 (54) Արագ պնդացող գիպսացեմենտային բաղադրանյութ
 (57) Հայտարկված է արագ պնդացող գիպսացեմենտային բաղադրանյութ, որը ներառում է հետևյալ բաղադրամասերը՝ զանգվ. % . ցեմենտ՝ 10.0-77.9, գիպս՝ 10.0-77.9, անօրգանական լցանյութ՝ 1.0-20.0, անօրգանական կապակցանյութ՝ 1.0-20.0, մակերեւութաակտիվ նյութ՝ 1.0-10.0, սիլիկատային լցանյութ (քարամշակման շլամ)՝ 10.0-30.0:

Բարձրացվում է բաղադրանյութի ջրադիմացկունությունը, իջեցվում է քերամաշեփուլությունը:

(51) (2006) (11) 1711 (13) A2
 C04B 38/08
 (21) P20050074 (22) 23.05.2005
 (42) 13.06.2005

(71) «Արմիտ-Դիամոնդ» ՍՊԸ (AM)
 (72) Լեւոն Սամիկոնի Մակարյան (AM), Արամ Լեւոնի Մակարյան (AM), Ռոզա Արեգի Ղազարյան (AM), Յեղուշ Անտոնի Գոգինյան (AM), Ռոբերտ Անդրանիկի Յովհաննիսյան (AM), Գալերիկ Բենիամինի Շեկյան (AM)
 (73) «Արմիտ Դիամոնդ» ՍՊԸ, Կոտայքի մարզ, քաղաք Բյուրեղավան (AM)
 (54) Ջերմաձայնամեկուսիչ իրերի պատրաստման բաղադրանյութ
 (57) Գյուտը վերաբերում է շինանյութերի արտադրությանը եւ կարող է օգտագործվել երեսպատման եւ ջերմաձայնամեկուսիչ սալերի պատրաստման համար, ինչպես նաեւ շենքերի եւ ջերմային սարքավորումների ջերմամեկուսացման համար:

Բաղադրանյութը պարունակում է հետևյալ բաղադրամասերը, զանգվ.% . հեղուկ կապակցանյութ՝ 20-40, մեկուսարար՝ 10-50, քարամշակման շլամ՝ 10-30, անօրգանական լցանյութ՝ 10-30, մարերեւութաակտիվ նյութ՝ 1-10, զուևանյութ՝ 1-15, պնդացման արագարար՝ 8-15:

Բարձրացվում է իրերի ամրությունն ու ջրակայունությունը:

(51) (2006) (11) 1712 (13) A2
 C05F 15/00
 A01C 15/00

(21) P20050131 (22) 18.07.2005
 (42) 11.08.2005

(71) Հենրիկ Արտաշեսի Բարսեղյան (AM), Մարինե Հենրիկի Բարսեղյան (AM)
 (72) Հենրիկ Արտաշեսի Բարսեղյան (AM), Մարինե Հենրիկի Բարսեղյան (AM)
 (73) Հենրիկ Արտաշեսի Բարսեղյան, Երեւան, Գարեգին Նժդեհի 30/3, բն. 31 (AM), Մարինե Հենրիկի Բարսեղյան, Երեւան, Գարեգին Նժդեհի 30/3, բն. 31 (AM)

(54) Կենսահումուսի սուբստրատի ստացման եղանակ

(57) Հայտարկված է կենսահումուսի սուբստրատի ստացման եղանակ, ըստ որի ֆերմենտացված գոմաղբն ու մանրացված ծղոտը իրար հաջորդող բեռնավորում են համապիտանի պարարտանյութացրիչի թափքի հարթակի վրա շերտերով եւ խառնում թափքի ելքի մասում տեղակայված խառնիչով:

Մեքենայացվում է կենսահումուսի ստացման պրոցեսը, ապահովվում է սուբստրատի համասեռությունը, 3 նկ:

(51) (2006) (11) 1713 (13) A2
 C07C 17/00
 C07C 19/00

(21) P20050104 (22) 16.06.2005
 (42) 11.08.2005

(71) Ռուզան Բաբկենի Բայաթյան (AM)
 (72) Ռուզան Բաբկենի Բայաթյան (AM), Բաբկեն Էլիզուհի Բայաթյան (AM), Լիդա Արշակի Սահակյան (AM)
 (73) Ռուզան Բաբկենի Բայաթյան, Երեւան, Նոր Նորքի 4-րդ միկրոշրջան, 2-րդ հատված 38, բն. 28 (AM)

(54) 1, 1, 1, 2, 3 – հնգաքլորպրոպանի ստացման եղանակ

(57) Հայտարկված է 1,1,1,2,3 - հնգաքլորպրոպանի ստացման եղանակ, ըստ որի 1,1,2 - եռաքլոր - 1 - պրոպենը թորում են ֆոսֆորի (V) օքսիդի առկայությամբ, ապա քլորավորում՝ նախապես ջրազրկված ֆոսֆորի (V) օքսիդի առկայությամբ, չոր քլորով քառաքլորածխածնի միջավայրում 20-60°C ջերմաստիճանում:

Բարձրացվում է արգասիքի ելքը:

- (51) (2006) (11) 1714 (13) A2
C07D 487/00
(21) P20050152 (22) 12.08.2005
(42) 03.10.2005
(71) Ռոբերտ Կարապետի Ղազարյան (AM), Լիդա Արշակի Սահակյան (AM), Արտակ Գագիկի Թովմասյան (AM)
(72) Ռոբերտ Կարապետի Ղազարյան (AM), Լիդա Արշակի Սահակյան (AM), Արտակ Գագիկի Թովմասյան (AM)
(73) Ռոբերտ Կարապետի Ղազարյան, Երեւան, Ծովակալ Իսակովի 28, բն.11 (AM), Լիդա Արշակի Սահակյան, Երեւան, Նազարեթ Սուրենյան 11բ, բն. 34 (AM), Արտակ Գագիկի Թովմասյան, ք. Մասիս, 3-րդ թաղամաս 16, բն 29 (AM)
(54) Մեզո-քառա-4-N-պիրիդիլպորֆինի ածանցյալներ եւ դրանց մետաղակոմպլեքսներ
(57) Հայտարկված են մեզո-քառա-(4-N-պիրիդիլ)պորֆինի ածանցյալներ եւ դրանց մետաղակոմպլեքսներ:

Մեզո-քառա-(4-N-պիրիդիլ)պորֆինինը ալկիլում են ալկիլիւոգենիդներով եւ ստանում N-քվատերնիդացված պիրիդիլպորֆիններ, որոնց փոխազդեցությամբ մետաղների աղերի հետ ստանում են մետաղպորֆիններ:

Ստացված միացությունները ունեն մանրէասպան, ֆունգիցիդային, աճը խթանող եւ լուսազգայունացնող ակտիվություն եւ կարող են կիրառվել բժշկության եւ գյուղատնտեսության մեջ, 2 անկախ կետ:

- (51) (2006) (11) 1715 (13) A2
C07D 487/00
(21) P20050153 (22) 12.08.2005
(42) 03.10.2005
(71) Ռոբերտ Կարապետի Ղազարյան (AM), Լիդա Արշակի Սահակյան (AM), Արտակ Գագիկի Թովմասյան (AM), Գրիգոր Վազգենի Գյուլխանդանյան (AM)
(72) Ռոբերտ Կարապետի Ղազարյան (AM), Լիդա Արշակի Սահակյան (AM), Արտակ Գագիկի Թովմասյան (AM), Գրիգոր Վազգենի Գյուլխանդանյան (AM)
(73) Ռոբերտ Կարապետի Ղազարյան, Երեւան, Ծովակալ Իսակովի 28, բն.11 (AM), Լիդա Արշակի Սահակյան, Երեւան, Նազարեթ Սուրենյան 11բ, բն. 34 (AM), Արտակ Գագիկի Թովմասյան, ք. Մասիս, 3-րդ թաղամաս 16, բն 29 (AM), Գրիգոր Վազգենի Գյուլխանդանյան, Երեւան, Եզնիկ Կողբացու 42, բն. 74 (AM)

- (54) Միաժամանակ ֆունգիցիդային եւ մանրէասպան ակտիվություն ունեցող մեզո-քառա-(4-N-օքսիէթիլպիրիդիլ)պորֆինի արծաթե կոմպլեքս

- (57) Հայտարկված է մեզո-քառա-(4-N-օքսիէթիլպիրիդիլ)պորֆինի արծաթե կոմպլեքս:

Կոմպլեքսը ստանում են համապատասխան պորֆիրինի եւ արծաթի նիտրատի փոխազդեցությամբ երկմեթիլֆորմամիդի կամ էթանոլի միջավայրում:

Ստացված կոմպլեքսը ունի միաժամանակ ֆունգիցիդային եւ մանրէասպան ակտիվություն եւ կարող է կիրառվել բժշկության մեջ:

- (51) (2006) (11) 1716 (13) A2
C07D 487/00
(21) P20050151 (22) 12.08.2005
(42) 03.10.2005

- (71) Ռոբերտ Կարապետի Ղազարյան (AM), Լիդա Արշակի Սահակյան (AM), Արտակ Գագիկի Թովմասյան (AM), Գրիգոր Վազգենի Գյուլխանդանյան (AM), Սերգեյ Կարապետի Երիցյան (AM)
(72) Ռոբերտ Կարապետի Ղազարյան (AM), Լիդա Արշակի Սահակյան (AM), Արտակ Գագիկի Թովմասյան (AM), Գրիգոր Վազգենի Գյուլխանդանյան (AM), Սերգեյ Կարապետի Երիցյան (AM)
(73) Ռոբերտ Կարապետի Ղազարյան, Երեւան, Ծովակալ Իսակովի 28, բն.11 (AM), Գրիգոր Վազգենի Գյուլխանդանյան, Երեւան, Եզնիկ Կողբացու 42, բն. 74 (AM), Արտակ Գագիկի Թովմասյան, ք. Մասիս, 3-րդ թաղամաս 16, բն 29 (AM), Գրիգոր Վազգենի յուլխանդանյան, Երեւան, Եզնիկ Կողբացու 42, բն. 74 (AM), Սերգեյ Կարապետի Երիցյան, Երեւան, Ավան-Առինջ 2/8,բն.18(AM)

- (54) Միաժամանակ ֆունգիցիդային եւ աճը խթանող ակտիվություն ունեցող մեզո-քառապիրիդիլպորֆիրինների ածանցյալների մետաղակոմպլեքսներ

- (57) Հայտարկված են մեզո-քառապիրիդիլպորֆիրինների ածանցյալների մետաղակոմպլեքսներ:

Մետաղակոմպլեքսները ստանում են համապատասխան պորֆիրինների եւ մետաղների նիտրատների կամ հալոգենիդների փոխազդեցությամբ երկմեթիլֆորմամիդի կամ էթանոլի միջավայրում:

Ստացված միացությունները ունեն միաժամանակ ֆունգիցիդային եւ աճը խթանող ակտի-

վություն, քիչ թունավոր են եւ կարող են կիրառվել գյուղատնտեսության մեջ որպէս ֆունգիցիդներ եւ աճը խթանող միջոցներ բոստանային եւ հացահատիկային մշակաբույսերի համար:

(51) (2006) (11) 1717 (13) A2
C07K 1/22

(21) P20050091 (22) 06.06.2005
(42) 12.07.2005

(71) Վիլեն Պարույրի Հակոբյան (AM), Լիզա Սողոմոնի Բալյան (AM), Նաիրա Ալեքսանդրի Ավետիսյան (AM)

(72) Վիլեն Պարույրի Հակոբյան (AM), Լիզա Սողոմոնի Բալյան (AM), Նաիրա Ալեքսանդրի Ավետիսյան (AM)

(73) Վիլեն Պարույրի Հակոբյան, Երեւան, Օրբելի Եղբայրների 33, բն.28 (AM), Լիզա Սողոմոնի Բալյան, Երեւան, Սայաթ-Նովայի 11, բն. 5 (AM), Նաիրա Ալեքսանդրի Ավետիսյան, Երեւան, Նորքի այգիներ 253 (AM)

(54) Գամմա-ամինակարազաթթվի A տեսակի ընկալիչների ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է պրոտեինների ստացման եղանակներին աֆինական քրոմատագրության միջոցով, մասնավորապես՝ գամմա-ամինակարազաթթվի ընկալիչների ստացման եղանակներին եւ կարող է կիրառվել դեղագործության մեջ:

A տեսակի գամմա-ամինակարազաթթվի ընկալիչներն անջատում են առնետների ուղեղից: Աֆինական քրոմատագրությունը կատարում են սինթեզված գամմա-ամինակարազաթթվի իմոբիլիզացված աֆինական կլանիչով, հսկվող ծակոտիներով ապակյա հիմքի վրա: Կլանիչից կատարում են դեսորբում 20 միկրոմոլ բիկուկուլինով՝ գամմա-ամինակարազաթթվի A տեսակի ընկալիչների ընտրողական ներհակորդով: Ստացված սպիտակուցային լուծույթի խտությունը գնահատում են համաձայն նրա օպտիկական խտության՝ 273 նանոմետր ալիքի երկարության ներքո:

Եղանակը թույլ է տալիս անջատել սպիտակուցային համակարգը՝ պահպանելով ընկալիչի ամբողջականությունը եւ ֆունկցիոնալ լիարժեքությունը:

(51) (2006) (11) 1718 (13) A2
C09D 109/06
C09D 133/00
E01F 9/04

(21) P20050159 (22) 23.08.2005
(42) 15.09.2005

(71) Սերգեյ Ժամհարյան (AM), Արամ Ժամհարյան (AM)

(72) Սերգեյ Ժամհարյան (AM), Արամ Ժամհարյան (AM)

(73) Սերգեյ Ժամհարյան, Երեւան, Հալաբյան 35, բն. 34 (AM), Արամ Ժամհարյան, Երեւան, Հալաբյան 35, բն. 34 (AM)

(54) Ճանապարհային նշագծման բաղադրանյութ «Պլաստմարկեր»

(57) Գյուտը վերաբերում է ճանապարհաշինությանը, մասնավորապես՝ ասֆալտաբետոնային ծածկույթ ունեցող ճանապարհների նշագծման բաղադրանյութերին եւ կարող է օգտագործվել ավտոճանապարհների եւ օդանավակայանների թռիչքի գոտիների նշագծման ժամանակ: Բաղադրանյութը պարունակում է հետեւյալ բաղադրամասերը, զանգվ.%. 0,5-2,0 մմ մասնիկների չափեր ունեցող մարմարի քարոն՝ 30 – 45, 0,01-0,5մմ մասնիկների չափեր ունեցող մարմարի փոշի՝ 30 – 45, գունանյութ՝ 3-5, պոլիստիրոլային խեժ՝ 15 – 25:

Բաղադրանյութը ապահովում է երկարակյաց, մաշակայուն եւ անսայթաքելի նշագծման ստացում:

(51) (2006) (11) 1719 (13) A2
C09J 1/00
C04B 28/00
C09D 5/34

(21) P20050075 (22) 23.05.2005
(42) 13.06.2005

(71) «Արմիտ-Դիանոնդ» ՍՊԸ (AM)

(72) Լեւոն Մամիկոնի Մակարյան (AM), Արամ Լեւոնի Մակարյան, Ռոզա Արեգի Ղազարյան (AM), Ջեղուշ Անտոնի Գոգինյան (AM), Ռոբերտ Անդրանիկի Հովհաննիսյան (AM), Գալերիկ Բենիամինի Շեկյան (AM)

(73) «Արմիտ Դիանոնդ» ՍՊԸ, Կոտայքի մարզ, քաղաք Բյուրեղավան (AM)

(54) Սիլիկատային սոսնձային բաղադրանյութ

(57) Գյուտը վերաբերում է շինանյութերի արտադրությանը եւ կարող է օգտագործվել սոսինձ-

ների եւ մածուկների ստացման համար, ինչպես նաեւ արհեստական քարերի պատրաստման եւ շինարարական քարերի ճեղքերի լցման համար:

Բաղադրանյութը ներառում է է հետեւյալ բաղադրամասերը, զանգվ.%. հեղուկ կապակցանյութ՝ 20-70, քարանշակման շլան՝ 10-30, անօրգանական լցանյութ՝ 14.9-30, մակերեւութաակտիվ նյութ՝ 0.1-10,0, պնդացման արագարար՝ 5-10:

Բարձրացվում է բաղադրանյութի ամրությունը ու ջրակայունությունը:

(51) (2006) (11) 1720 (13) A2
C09J 163/00
C09J 163/10

(21) P20050117 (22) 06.07.2005
(42) 11.08.2005

(71) Մեժլում Լեւոնի Երիցյան (AM)
(72) Գայանե Վանիկի Հակոբյան (AM), Ռայա Ավանեսի Քարամյան (AM)
(73) Մեժլում Լեւոնի Երիցյան, Երեւան, Մալյան 22, բն. 2 (AM)
(54) Էպօքսիդային բաղադրանյութ
(57) Գյուտը վերաբերում է պոլիմերային քիմիային, մասնավորապես՝ էպօքսիդային բաղադրանյութերին, որոնք կարող են որպես սոսինձ կիրառվել տեխնիկայի տարբեր բնագավառներում:

Բաղադրանյութը ներառում է զանգվ. % էպօքսիդային խեժ՝ 66.5-80.5, պնդարար՝ 14.5-23.5, մալեինաթթվի անհիդրիդ՝ 5.0-10.0, ընդ որում պնդարարը մալեինաթթվի անհիդրիդի եւ միամեթիլոլալիլթիոմիդանյութի մետաղների քլորիդների հետ կոմպլեքսի խառնուրդ է:

Ընդլայնվում է էպօքսիդային բաղադրանյութերի տեսականին, բարձրացվում բաղադրանյութով սոսնձված նմուշների սոսնձային կարի սահքի ամրությունը:

(51) (2006) (11) 1721 (13) A2
C12F 5/00
B01D 3/14

(21) P20050035 (22) 30.03.2005
(42) 11.08.2005

(71) Գելորգ Ավետիսյան (AM), Յուրի Դուրգարյան (AM)

(72) Գելորգ Ավետիսյան (AM)

(73) Գելորգ Ավետիսյան, Երեւան, Վրացական փող. 4-րդ նրբ. 5, բն.44 (AM), Յուրի Դուրգարյան, Երեւան, Բաբաջանյան 143, բն. 23 (AM)

(54)Սպիրտի արտադրության գլխային ֆրակցիաներից սննդային բազմաթորած էթիլային սպիրտի ստացման եղանակ եւ սարք

(57) Բազմաթորած էթիլային սպիրտի ստացումն իրականացնում են չորս փուլով՝ առաջին փուլում հեռացնում են եթերաալդեհիդային խտանյութը, սիվոլխային խտանյութը եւ ցածր որակի սպիրտը: Երկրորդ փուլում՝ առաջին փուլում ստացված ցածր որակի սպիրտից հեռացնում են բազմաթորած սպիրտը, ցածր որակի սպիրտը եւ սպիրտ պարունակող պոչային ֆրակցիան: Երրորդ փուլում՝ երկրորդ փուլում ստացված ցածր որակի սպիրտից հեռացնում են բազմաթորած սպիրտը, ցածր որակի սպիրտը եւ սպիրտ պարունակող պոչային ֆրակցիան: Չորրորդ փուլում՝ երկրորդ եւ երրորդ փուլերում ստացված սպիրտ պարունակող պոչային ֆրակցիաներից եւ երրորդ փուլում ստացված ցածր որակի սպիրտից հեռացնում են բազմաթորած էթիլային սպիրտը:

Հայտարկված է նաեւ եղանակն իրականացնող սարք:

Բարձրացվում է սպիրտի որակը, 2 անկախ կետ, 5 նկ.:

(51) (2006) (11) 1722 (13) A2
C12G 3/06

(21) P20050099 (22) 13.06.2005
(42) 12.07.2005

(71) Արմեն Օնիկի Սահակյան (AM)
(72) Արմեն Օնիկի Սահակյան (AM)
(73) Արմեն Օնիկի Սահակյան, Երեւան, Հ.Հովանցիսյան 119, բն. 27 (AM)

(54) Բալասան «Արքայական»

(57) Գյուտը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես՝ լիկյորների եւ օղիների արտադրությանը: Բալասանը ներառում է բուսական հումք, ուրցի, անանուխի եւ պատրինջի եթերայուղեր եւ ջրասպիրտային հեղուկ, ընդ որում որպես բուսական հումք օգտագործում են խնկողկուզակ, լորենու ծաղիկներ, լոշտակ (արմատը), բալենու պտուղներ, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (կգ/ 100 դալ). խնկողկուզակ՝ 25-27, լորենու ծաղիկներ՝ 24-27, լոշտակ (արմատը)՝ 23-25, բալենու պտուղներ՝

5-10, ուրցի եթերայուղ՝ 0,9-1,0, անանուխի եթերայուղ՝ 0,8-0,9, պատրիճի եթերայուղ՝ 0,3-0,4, ջրասպիրտային հեղուկ՝ մնացածը:

(51) (2006) (11) 1723 (13) A2
C12P 1/04

(21) P20050110 (22) 21.06.2005

(42) 11.08.2005

(71) Արմեն Եղիշեի Աղաջանյան (AM)

(72) Արմեն Եղիշեի Աղաջանյան (AM), Ֆլորա Նուբարի Տիրունի (AM), Ջերմինե Վալերիկի Համբարձումյան (AM), Գայանե Ժորժիկի Հովանիսյան (AM), Ծովինար Ռաֆիկի Բալաբեկյան (AM), Անդրանիկ Հակոբի Վարդանյան (AM)

(73) Արմեն Եղիշեի Աղաջանյան, Երեւան, Գրիբոյեդովի 3, բն. 47 (AM)

(54) *Lactobacillus acidophilus* 1991 շտամի մանրէասպան հատկություններ ունեցող նյութափոխանակության արգասիքի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կենսատեխնոլոգիային, մասնավորապես՝ կոլտուրալ հեղուկից մանրէասպան հատկություններ ունեցող նյութափոխանակության արգասիքի անջատման եւ մաքրման եղանակներին:

Lactobacillus acidophilus 1991(BKIM B-6257) շտամը աճեցնում են սնուցիչ միջավայրում: Ստացված կոլտուրալ հեղուկը ցենտրիֆուգում են, վերնստվածքային հեղուկը աղազրկում են անիոնափոխանակային խեժով: Խեժը լվանում են սկզբից ջրով, ապա՝ 1%-անոց աղաթթվով: Ստացված էլյուատը գունազրկում են ակտիվացրած ածխով, գերզտում եւ շոգեացնում վակուումով:

Բարձրացվում է եղանակի տեխնոլոգիամիտությունը եւ արդյունավետությունը:

(51) (2006) (11) 1724 (13) A2
E04B 1/76

E04B 1/98

(21) P20050078 (22) 24.05.2005

(42) 12.07.2005

(71) Մարտուն Անուշավանի Սահակյան (AM)

(72) Մարտուն Անուշավանի Սահակյան (AM), Կառլեն Սարգսի Ղազարյան (AM), Հենրիկ Հմայակի Փալանդուզյան (AM)

(73) Մարտուն Անուշավանի Սահակյան, Երեւան, Գրիբոյեդովի 5ա, բն. 31 (AM)

(54) Ջերմամեկուսիչ սեյսմակայուն պատի պանել
(57) Պանելն ունի կոշտության կողեր ունեցող երկու իրար զուգահեռ երկաթբետոնե շերտեր եւ դրանց միջեւ տեղակայված ջերմամեկուսիչ շերտ: Երկաթբետոնե շերտերի ներքին մակերեսայիններին կան սեղանաձեւ ընդլայնական ելուստներ, իսկ կոշտության կողերին արված են փորվածքներ, որոնց մեջ տեղակայված են պանելի երկաթբետոնե շերտերի միակցման, ինչպես նաեւ հարակից պանելների եզրակցման մետաղական թիթեղներ:

Բարձրացվում է կառույցի սեյսմակայունությունը, նվազեցվում են ջերմային կորուստները, 3 նկ.:

(51) (2006) (11) 1725 (13) A2
E05B 9/00

(21) P20050064 (22) 16.05.2005

(42) 11.08.2005

(71) Ալբերտ Պողոսյան (AM), Էմիլ Գրիգորյան (AM)

(72) Ալբերտ Սրապիոնի Պողոսյան (AM), Սուրեն Ալբերտի Պողոսյան (AM)

(73) Ալբերտ Պողոսյան, Երեւան, Շիրազի 20, բն.30 (AM), Էմիլ Գրիգորյան, Երեւան, Տերյան 83, բն. 12 (AM)

(54) Ներդրովի փականքի գլանային մեխանիզմ

(57) Գյուտը վերաբերում է փականքների, մասնավորապես՝ դրանց գլանային մեխանիզմին եւ կարող է կիրառվել մուտքի դռների ներդրովի փականքներում:

Գլանային մեխանիզմն ունի իրան, դրա մեջ երկու կողմից անշարժ ամրակցված թմբկազաններ, որոնց մեջ պտտվելու հնարավորությամբ տեղակայված են միջուկներ, եւ բանալի: Մեխանիզմի իրանի երկարությունը փոքր է մուտքի դռների ընդունված ստանդարտ նվազագույն հաստությունից: Մեխանիզմը լրացուցիչ ունի բանալու ուղղորդիչներ, որոնց վրա արված են իրանի լայնական կտրվածքի եզրագծին համապատասխան եզրագծով ելուստներ: Ելուստները նախատեսված են ներդրովի փականքի մակադրակների ձեւավոր անցքերի մեջ տեղակայվելու համար: Ելուստների գլանային մասի կենտրոնում կա բանալու ուղղորդման կլոր անցք: Բանալու աստիճանավոր մասում արված է լայնական փորակ: Միջուկները միաված օղակների միջոցով իրենց ճակատային եզրա-

մասերով ամրակցված են թմբազլանների մեջ եւ ճակատային մասում ունեն սեզմենտածեւ ելուստ, որոնց հարթ մասերը կատարված են բանալիով միջուկը պտտելիս բանալու փորակի ծայրամասերի հետ համագործակցելու հնարավորությամբ: Բանալու երկարությունն ընտրված է ըստ դռան հաստության:

Բարձրացվում է ներդրովի փականքի հուսալիությունը, փոքրացվում են գլանային մեխանիզմի եզրաչափերը, 5 նկ.:

(51) (2006) (11) 1726 (13) A2

F02M 3/00
F02D 33/00

(21) P20050124 (22) 08.07.2005

(42) 11.08.2005

(71) Նարինե Անուշավանի Գասպարյան (AM), Գագիկ Սուրենի Երիցյան (AM)

(72) Նարինե Անուշավանի Գասպարյան (AM), Գագիկ Սուրենի Երիցյան (AM)

(73) Նարինե Անուշավանի Գասպարյան, Երեւան, Բաբայան 36, բն. 37 (AM), Գագիկ Սուրենի Երիցյան, Երեւան, Ա. Բաբաջանյան 93, բն. 20 (AM)

(54) Կարբյուրատորի լողանային խցից բենզինի հեռացման սարքի ավտոմատ կառավարման համակարգ

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես՝ կարբյուրատորի լողանային խցից բենզինի արագ հեռացման միջոցով վառելիքի գոլորշիացման նվազեցմանը:

Կարբյուրատորի լողանային խցից բենզինի հեռացման սարքի ավտոմատ կառավարման համակարգն ունի էլեկտրամագնիս, լողանային խցի հետ միակցված մխոցավոր գլան, որի զսպանակած մխոցակոթը հանդիսանում է էլեկտրամագնիսի խարիսխը՝ եւ վառելիքի պոմպ՝ իր փակող տարրը հանդիսացող էլեկտրամագնիսական փականով: Համակարգը լրացուցիչ ունի աքսելերատորի ոտնակին միակցված ծայրային անջատիչ, որին միակցված են թայմերն ու էլեկտրամագնիսական փականը, ընդ որում թայմերն ունի էլեկրամագնիսը միացնելու հնարավորություն:

Ավտոմատացվում է լողանային խցից բենզինի հեռացման սարքի կառավարումը, 1 նկ.:

(51) (2006) (11) 1727 (13) A2

F02M 21/00

(21) P20050060

(22) 05.05.2005

(42) 12.07.2005

(71) «Հայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առեւտրային կազմակերպություն (AM)

(72) Նորիկ Բագիկյան (AM), Ռազմիկ Բալայան (AM), Արման Սիմոնյան (AM)

(73) «Հայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) Ներքին այրման գազային շարժիչ գազի մատուցման սարք

(57) Գյուտը վերաբերում է շարժիչաշինությանը:

Ներքին այրման գազային շարժիչ գազի մատուցման սարքն ունի երկաստիճան գազային ռեդուկտոր-գոլորշիչ, որը միակցված է երկխցավոր հաջորդաբար բացվող դրոսելային սահափականներով եւ դիֆուզորներով կարբյուրատոր-խառնիչին, ինչպես նաեւ խցերում դիֆուզորներից առաջ տեղակայված առաջին եւ երկրորդ բոցամուղներ: Ռեդուկտոր-գոլորշիչի իրանի վրա տեղակայված է էլեկտրամագնիսական փական-արագացուցիչ, որի կոճի գալարների ծայրերը միացված են հոսանքի աղբյուրին վարորդի խցիկի հատակին տեղակայված եւ դրոսելային սահափականների կառավարման ոտնակի տակ գտնվող փոխարկիչի միջոցով:

Բարելավվում է շարժիչի թափառքառնակությունը, 1 նկ.:

(51) (2006) (11) 1728 (13) A2

F02M 21/00

(21) P20050107

(22) 20.06.2005

(42) 15.09.2005

(71) «Հայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առեւտրային կազմակերպություն (AM)

(72) Նորիկ Բագիկյան (AM), Ռազմիկ Բալայան (AM), Արման Սիմոնյան (AM)

(73) «Հայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) Ներքին այրման շարժիչ գազի մատուցման կարգավորման սարք

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես գազաբալունային ավտոմեքենաների սնման համակարգին:

Ներքին այրման շարժիչ գազի մատուցման կարգավորման սարքն ունի դրոսելային փականով կարբյուրատոր-խառնիչ եւ երկաստիճան գազային ռեդուկտոր-գոլորշիչ, որը խողովակով միակցված է կարբյուրատոր-խառնիչին: Սարքն ունի նաեւ մխոցավոր փական, որը դրոսելային փականի հետ համագործակցում է կինեմատիկական փոխանցման մեխանիզմի միջոցով, իսկ ռեդուկտոր-գոլորշիչի եւ ներածման կոլեկտորի հետ միակցված է գազի մատուցման խողովակի միջոցով:

Բարելավվում են ավտոմեքենայի դինամիկական հատկանիշները, նվազեցվում է վառելիքի ծախսը, 1 նկ.:

(51) (2006) (11) 1729 (13) A2
 F03B 3/00
 (21) P20050066 (22) 18.05.2005
 (42) 11.08.2005
 (71) Վլադիմիր Արտուշի Խաչատրյան (AM)
 (72) Վլադիմիր Արտուշի Խաչատրյան (AM)
 (73) Վլադիմիր Արտուշի Խաչատրյան, Երեւան, Աբովյան 11, բն. 24 (AM)
 (54) Հիդրոտուրբին
 (57) Հիդրոտուրբինն ունի հիմնական սկավառակի վրա կոշտ ամրակցված երկու լիսեռ, որոնց վրա տեղակայված են սկավառակներ: Սկավառակները պտտվում են իրենց առանցքների շուրջը՝ շնորհիվ շիթի կինետիկ էներգիայի, եւ միաժամանակ հիմնական սկավառակի առանցքի շուրջը՝ շիթի ռեակտիվ ուժի շնորհիվ: Հիմնական եւ երկու սկավառակների հակադիր պտույտները մեկ ուղղության բերելու համար նրանց լիսեռների ծայրերին տեղադրված են ատամնանիվներ:
 Բարձրացվում է հիդրոտուրբինի օգտակար գործողության գործակիցը, 1 նկ.:

(51) (2006) (11) 1730 (13) A2
 F03B 17/00
 (21) P20050070 (22) 20.05.2005
 (42) 11.08.2005
 (71) Վարդան Փենեսյան (AM)
 (72) Վարդան Փենեսյան (AM)
 (73) Վարդան Փենեսյան, Երեւան, Ղազար Փարպեցու 17, բն.1 (AM)

(54) Հիդրավլիկ շարժիչ ըստ Փենեսյանի
 (57) Շարժիչն ունի ջրով լցված աշտարակ, ճկուն տարրերով միմյանց միացված գլանաձեւ լողանների ծայրափակ շղթա, որոնցից մի մասը գտնվում է աշտարակի մեջ: Աշտարակի ստորին անցքի եզրերին տեղակայված է միմյանց շոշափող անիվների զույգ, որոնք ունեն լողանների ձեւին ու չափերին համապատասխան թիակներ: Անիվների առանցքային մակերեւույթը թեքված է այնպես, որ ջրի մակերեւույթից այն անվի հեռավորությունը, որի առանցքը գտնվում է շղթայի շրջագծից դուրս, ավելի մեծ է, քան այն անվինը, որի առանցքը գտնվում է այդ շրջագծի ներսում 1 նկ.:

(51) (2006) (11) 1731 (13) A2
 F03D 3/00
 (21) P20050083 (22) 01.06.2005
 (42) 11.08.2005
 (71) Արա Կարապետի Ամիրյան (AM)
 (72) Արա Կարապետի Ամիրյան (AM), Հրանտ Արայի Ամիրյան (AM)
 (73) Արա Կարապետի Ամիրյան, Երեւան, Ագաթանգեղոսի 7, բն. 228 (AM)
 (54) Կարուսելային հողմաշարժիչ
 (57) Գյուլոը վերաբերում է հողմաշարժիչներին եւ կարող է օգտագործվել այլընտրանքային էներգետիկայի բնագավառում:

Կարուսելային հողմաշարժիչն ունի ուղղաձիգ լիսեռ: Լիսեռի վրա ամրակցված են հորիզոնական հեծաններ: Հեծանների ծայրերում ամրակցված են ուղղաձիգ սռնիներ, որոնց վրա տեղակայված են դարձկեն թիակներ, որոնք միասին կազմում են հողմաշարժիչի հողմանիվը:

Հողմաշարժիչը բազմահարկ է: Թիակներն առագաստային են եւ հողակապերի միջոցով ամրակցված են միջհարկային հեծանների սռնիներն հողակապերի միջոցով: Առագաստային թիակները դասավորված են հարկերում փուլային շեղման անկյունով՝ ըստ բարձրության առաջացնելով պտուտակային գիծ: Միջհարկային հեծանների վրա հողմանվի պտույտի ակտիվ տեղամասում յուրաքանչյուր առագաստային թիակի սեւեռակման եւ կարգավորման համար տեղակայված է կարգավորիչ:

Բարձրացվում է քանու էներգիայի օգտագործման գործակիցը, պարզեցվում է հողմաշարժիչի կառուցվածքը, 3 նկ.:

- (51) (2006) (11) 1732 (13) A2
F04B 9/00
- (21) P20050007 (22) 07.02.2005
- (42) 11.04.2005
- (71) Հայսեր Պոլոսյան (AM)
- (72) Հայսեր Պոլոսյան (AM), Ռազմիկ Մինասյան (AM)
- (73) Հայսեր Պոլոսյան, Երեւան, Արաբկիրի 37-րդ փող., 3/2, բն. 211 (AM)
- (54) Հիդրոտուրբինային պոմպ
- (57) Գյուտը վերաբերում է հիդրոմեքենաշինությանը, մասնավորապես՝ պոմպաշինությանը եւ կարող է կիրառվել ցածր պոտենցիալով ջրահոսքերում հոսող ջրի վերհանման համար:

Հիդրոտուրբինային պոմպ ունի հիդրոտուրբին, հիդրոտուրբինի ներսում տեղակայված ջրի առանցքամխոցային պոմպ, ջրի հոսքի ուղղությունը կարգավորող շիթուղղորդիչ, ջրի մուտքային եւ ելքային ծայրափողակներ, հիդրոտուրբինի սռնի ծառայող ջրի ներծծման եւ մղման խողովակներ, հիդրոտուրբինի սռնոււն անշարժ ամրակցված թեք սկավառակ: Պոմպի մխոցների հետադարձառաջընթաց շարժումն իրականացվում է թեք սկավառակի ներքին շրջանային փորակի մեջ պտտվող պահունակի եւ նրա մեջ տեղակայված մխոցների ծայրամասերի հողակապերի օգնությամբ, իսկ ջրի բաժնավոր մատակարարումն իրականացվում է դարձյակային բաշխիչի օգնությամբ: Ընդ որում, ջրի մեջ սուզման խորությունը կարգավորելու հնարավորություն ունեցող շերտաձողով եւ մղման խողովակով հիդրոտուրբինային պոմպը սեւեռակված է հետիոտնային կամրջակի կրող հիմնասալին:

Պարզեցվում է կառուցվածքը, փոքրացվում են եզրաչափերը, 2 նկ.:

- (51) (2006) (11) 1733 (13) A2
F04B 25/00
- (21) P20050168 (22) 12.09.2005
- (42) 03.10.2005
- (71) «ՍԻՄ-ՍՏԱԼ» ՍՊԸ (AM)
- (72) Ալբերտ Ազարյան (AM), Համլետ Չոբանյան (AM), Համլետ Հովհաննիսյան (AM), Ռուբեն Եսայան (AM), Կարո Սոֆյան (AM), Յուրիկ Շահինյան (AM)
- (73) «ՍԻՄ-ՍՏԱԼ» ՍՊԸ, Վանաձոր, Խնձորուտ 1/25 (AM)
- (54) Գազային ճնշակ
- (57) Գյուտը վերաբերում է բարձր ճնշման գազային ճնշակներին:

Գազային ճնշակն ունի իրան, դրան իրար ուղղահայաց կոշտ ամրակցված երկու աշխատանքային գլան, որոնց մեջ տեղադրված են հետադարձառաջընթաց շարժման մխոցներ, դրանց իրենց մեկ ծայրով ամրակցված մխոցակոթեր, որոնք իրենց մյուս ծայրով համագործակցում են շարժաբեր մեխանիզմի հետ, ընդ որում մխոցների շարժման առանցքները իրար ուղղահայաց են: Գնշակն ունի նաեւ գազի մուտքի եւ ելքի փականներ, ինչպես նաեւ իրանի եւ գլանների միջեւ տեղադրված անվտանգության միջնորմ, որը մեկուսացնում է իրարից գազի սեղմման գոտիները եւ շարժաբերը, այսինքն արգելակում է գազի արտահոսքը դեպի շուռտվիկ-շարժաթեւային մեխանիզմ: Անվտանգության միջնորմում տեղակայված են ածխաֆտորապլաստե նյութից պատրաստված հիմնական եւ լրացուցիչ խցուկներ: Աշխատանքային գլանն ունի իրան, որի ներսում տեղակայված է թուջե պարկուճ, իսկ դրսից իրանը պատված է եռակցված պողպատե շապիկով, որն ունի դեպի իր եւ գլանի իրանի միջեւ առաջացած ազատ ծավալը հովացնող ջրի մուտքի եւ այդ ծավալից դեպի դուրս ջրի ելքի միջոցներ:

Բարձրացվում է ճնշակի վերջնական ճնշումը, 2 նկ.:

- (51) (2006) (11) 1734 (13) A2
F16H 1/00
F16H 3/00
- (21) P20050069 (22) 19.05.2005
- (42) 11.08.2005
- (71) Կոլյա Շահնազարյան (AM)
- (72) Կոլյա Շահնազարյան (AM)
- (73) Կոլյա Շահնազարյան, Լոռու մարզ, գյուղ Շնող (AM)
- (54) Դիֆերենցիալ ատամնավոր վարիատոր ըստ Շահնազարյանի
- (57) Գյուտը վերաբերում է ընդհանուր մեքենաշինությանը, մասնավորապես վարիատորներին: Դիֆերենցիալ ատամնավոր վարիատորն ունի իրան, մուտքի լիսեռ, դրան միակցված պարուրածեւ ատամնավոր ելուստ ունեցող կոնաձեւ մաս, որի ատամները կատարված են երկու մուտքով, շլիցավոր լիսեռներ՝ դրանց վրա տեղակայված երկուական ատամնանիվներով, որոնցից առաջինները համագործակցում են կոնաձեւ մասի ելուստի ատամների հետ նրանց ամբողջ երկարությամբ, իսկ նրանց վերջնամասում ամրակցված երկրորդ ատամնանիվները կառչման մեջ

են միջանկյալ բլոկ ատամնանիվների առաջին ատամնանվի հետ: Նույն բլոկի երկրորդ ատամնանիվը կառչման մեջ է ելքի լիսեռին ամրակցված տարիչի մատների վրա տեղադրված մոլորակային բլոկ ատամնանիվների առաջին ատամնանվի հետ, իսկ մոլորակային բլոկ ատամնանիվների երկրորդ ատամնանիվը կառչման մեջ է մուտքի լիսեռի վերջնամասում տեղակայված ատամնանվի հետ:

Պարզեցվում է կառուցվածքը, 4 նկ.:

(51) (2006) (11) 1735 (13) A2
F16H 21/00
(21) P20050028 (22) 24.03.2005
(42) 12.07.2005
(71) Լեւոն Մանանդյան (AM), Վանիկ Ադամյան (AM)
(72) Լեւոն Մանանդյան, Վանիկ Ադամյան
(73) Լեւոն Մանանդյան, Գյումրի, Տիգրան Մեծի 116/088 (AM), Վանիկ Ադամյան, Գյումրի, 26 Կոմիսարների 82ա (AM)
(54) Հորիզոնի նկատմամբ անկյան տակ նետած մարմնի թռիչքի պարամետրերի որոշման շուռտվիկակուլիսային մեխանիզմ
(57) Հորիզոնի նկատմամբ անկյան տակ նետած մարմնի թռիչքի պարամետրերի որոշման շուռտվիկակուլիսային մեխանիզմի շուռտվիկի վրա ամրակցված են հողակապային հանգույցը եւ շարժաթելը: Կուլիսը կատարված է հողակապային հանգույցի միջով սահելու հնարավորությամբ: Մեխանիզմն ունի նաեւ հորիզոնական տեղակայված զուգագցիչ, որի մի ծայրը միակցված է հողակապային հանգույցին, մյուս ծայրը՝ շուռտվիկին զուգահեռ տեղակայված հողակապային լծակին:

Հորիզոնի նկատմամբ անկյան տակ նետած մարմնի թռիչքի պարամետրերը որոշելու համար մեխանիզմի շուռտվիկը պտտում են այնքան, մինչեւ կուլիսի կազմած անկյունը հորիզոնական ուղղության հետ հավասար լինի նետման անկյանը: Ջուգակցիչ ու շարժաթելի հատման կետի կողողինատներն իրենցից կներկայացնեն մարմնի վերելքի ամենամեծ բարձրությունը, իսկ հորիզոնական ուղղությամբ՝ առավելագույն հեռավորությունը: Մեխանիզմի միջոցով լուծում են նաեւ հակառակ խնդիրը՝ թռիչքի պարամետրերով գտնում մարմնի նետման անկյունը:

Ընդլայնվում են մեխանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունները, բարձրացվում է պարամետրերի որոշման ճշգրտությունը, 2 նկ.:

(51) (2006) (11) 1736 (13) A2
F16H 31/00
(21) P20050043 (22) 11.04.2005
(42) 12.07.2005
(71) Ալբերտ Սրապիոնի Պողոսյան (AM)
(72) Ալբերտ Սրապիոնի Պողոսյան (AM), Սուրեն Ալբերտի Պողոսյան (AM)
(73) Ալբերտ Սրապիոնի Պողոսյան, Երեւան, Շիրազի 20, բն. 30 (AM)
(54) Պտուտակային փոխանցիչ
(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը եւ կարող է օգտագործվել ավտոմատ սարքավորումների, արագ գործող սեղմիչների, ամբարձիչների եւ մամլակների մեջ:

Պտուտակային փոխանցիչն ունի իրան, կազմովի մանեկ եւ պտուտակ, որի վրա երկայնական ուղղությամբ արված է ակոս: Մանեկը կազմված է չորս եւ ավելի քանակությամբ ներդրակներից, որոնք տեղադրված են իրանի մեջ՝ կենտրոնական մասում աստիճանավոր անցքի մակերեսային վրա երկայնական ուղղությամբ արված փորակներում: Ներդրակները հենված են փորակների հատակների վրա՝ ծայրամասերում տարբեր բարձրություններով միեւնույն ուղղությամբ արված թեք հարթություններին՝ իրենց վրա ծայրամասերում արված համապատասխան թեք հարթություններով: Ներդրակների ճակատային մասերում արված կոնական մակերեսայիններին մի կողմից հենված է համապատասխան կոնական մակերեսային թվ իրանի անցքի մեջ համառանցք տեղակայված զսպանակած հենարանը, մյուս կողմից՝ համապատասխան կոնական մակերեսային թվ պատճենասալը: Այն տեղակայված է իրանի անցքի մեջ՝ միայն առանցքային ուղղությամբ տեղափոխվելու հնարավորությամբ: Պատճենասալի մյուս ճակատին արված երկու միեւնույն բարձրության պարուրածեւ թեք հարթություններին երկու զնդիկների միջոցով հենված է իրանի անցքի մեջ ազատ տեղակայված զսպանակած սկավառակը:

Բարձրացվում է փոխանցիչի հուսալիությունը, բարելավվում են շահագործման պայմանները, 4 նկ.:

(51) (2006) (11) 1737 (13) A2
F16H 48/00
(21) P20050068 (22) 19.05.2005
(42) 11.08.2005
(71) Կոլյա Հարությունի Շահնազարյան (AM)
(72) Կոլյա Հարությունի Շահնազարյան (AM)

(73) Կոլյա Չարոբյունի Շահնագարյան, Լոռու մարզ, գյուղ Շնող (AM)

(54) Հիդրոսահմանափակիչ կցորդիչով կառավարվող փոխանցման տուփ

(57) Գյուտը վերաբերում է փոխանցման տուփերին, հատկապես՝ հիդրավլիկ սկզբունքով աշխատող կցորդիչի կառավարմամբ:

Տուփի կցորդիչը կազմված է վեց շառավղային գլաններից, մխոցներից եւ շարժաթելերից, որոնք ծնկավոր լիսեռի միջոցով համախմբված են մեկ գլխիկում: Գլանները ճնշումային խողովակների եւ դրոսելային փականի միջոցով հաղորդակցվում են փոխանցման տուփի քարտերի հետ: Կցորդիչի գլանները մեկընդմեջ կազմում են երեք գլան պարունակող եւ զուգահեռ լայնական հարթություններում տեղակայված երկու խումբ: Դրանց շարժաթելերը տեղակայված են ծնկավոր լիսեռի երկու հակադիր ծնկերի վրա, յուրաքանչյուր գլան իր ճնշումային խողովակի վրա ունի ճնշումային փական: Երկու հարեւան գլանների ճնշումային փականները համառանցք են: Ծնկավոր լիսեռը համառանցք միակցված է տուփի մուտքի լիսեռին, որն ունի կցորդիչ սկավառակ եւ իր ծայրամասում տեղակայված ատամնանիվ: Ատամնանիվը կառչման մեջ է եռաշարք դիֆերենցիալի մոլորակային բլոկի երկրորդ շարքի մոլորակային ատամնանիվների հետ: Բլոկի երրորդ շարքի մոլորակային ատամնանիվները կառչման մեջ են ելքի լիսեռի վրա ամրակցված կենտրոնական ատամնանիվի հետ, իսկ բլոկի առաջին շարքի մոլորակային ատամնանիվները կառչման մեջ են արգելակող սկավառակին ամրակցված կենտրոնական ատամնանիվի հետ:

Ապահովվում է օ.գ.գ.-ի բարձրացում, 4 նկ.:

(51) (2006) (11) 1738 (13) A2
F24F 13/08

(21) P20050027 (22) 22.03.2005
(42) 12.07.2005

(71) «Հայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Շավարշ Գրիգորյան (AM), Անդրանիկ Ղարազուլյան (AM), Սամվել Հովհաննիսյան (AM)

(73) «Հայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) Ծխահեռացման սարք

(57) Գյուտը վերաբերում է կենցաղային պինդ, հեղուկ կամ գազային վառելանյութով աշխատող վառարաններից ծխի հեռացման սարքավորումներին:

Ծխահեռացման սարքն ունի հողմացույց, գցովի պահանգ, որի վրա ամրակցված է սռնի: Սռնու վրա առանցքակալային հանգույցի միջոցով ամրակցված է քանուց պաշտպանող կիսագլանաձեւ հովար՝ ճակատային կիսաշրջանաձեւ վահանակով: Հողմացույցը կիսագլանաձեւ հովարի եւ ճակատային կիսաշրջանաձեւ վահանակի հետ միասին առանցքակալային հանգույցի միջոցով նստեցված է գցովի պահանգի անշարժ սռնու վրա, ընդ որում հողմացույցը հավասարակշռված է կիսագլանաձեւ հովարի եւ ճակատային կիսաշրջանաձեւ վահանակի հետ, ինչը թույլ է տալիս նրան պտտվել նաեւ թույլ քամիների ժամանակ: Սարքը հեշտությամբ տեղակայվում է ծխնելույզի ելքամասին գցովի պահանգի օգնությամբ:

Պարզեցվում է սարքի կառուցվածքը, բարձրացվում է սարքի աշխատունակությունը, բարելավվում են շահագործման պայմանները, 2 նկ.:

(51) (2006) (11) 1739 (13) A2
F24J 2/06

(21) P20050109 (22) 20.06.2005
(42) 12.07.2005

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Ռուբեն Ռաֆիկի Վարդանյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Արեգակնային էներգիայի հայելային համակենտրոնիչ

(57) Գյուտը վերաբերում է արեգակնային էներգիայի համակենտրոնացնող կերպափոխող համակարգերին եւ կարող է օգտագործվել արեգակի ճառագայթների հավաքման նպատակով՝ լուսաէլեկտրական եւ ջերմային կերպափոխող համակարգերում:

Համակենտրոնիչն ունի հիմք, դրա վրա տեղադրված, տարբեր անկյունների տակ թեքված հայելային տարրեր եւ դրանցից անդրադարձված արեգակնային ճառագայթների կուտակիչ: Հիմքը

կատարված է ակոսի տեսքով, որի կողերը թեքված են հատակի նկատմամբ 120 աստիճանով:

Իջեցվում են կոնստրուկցիայի ինքնարժեքը եւ շահագործման ծախսերը նյութատարության նվազեցման եւ տեխնոլոգիամիտության բարձրացման շնորհիվ, 1 նկ.:

(51) (2006) (11) 1740 (13) A2
F24J 2/38

(21) P20050067 (22) 19.05.2005
(42) 12.07.2005

(71) Ռաֆայել Գագիկի Խաչատրյան (AM), Էրնեստ Վահենի Ղազարյան (AM)

(72) Ռաֆայել Գագիկի Խաչատրյան (AM), Էրնեստ Վահենի Ղազարյան (AM)

(73) Ռաֆայել Գագիկի Խաչատրյան, Երեւան, Սմբատ Ջորավարի 48, բն. 9 (AM), Էրնեստ Վահենի Ղազարյան, Երեւան, Տպագրիչների 5, բն. 19 (AM)

(54) Հելիոկայանքի դեպի Արեգակը կողմնորոշման ավտոմատ համակարգ

(57) Գյուտը վերաբերում է արեւային վերափոխիչների, մասնավորապես՝ արեւային կերպափոխիչների համախմբի դեպի Արեգակը կողմնորոշման համակարգերին:

Համակարգն ունի լուսազգայուն տարրեր, ռելեներ եւ գործադիր սարք: Լուսազգայուն տարրերը երկու ֆոտոդիոդներ են, իսկ ռելեները երկուսն են: Համակարգը լրացուցիչ ունի հովհարածեւ դասավորված խողովակների համախումբ: Խողովակներից յուրաքանչյուրի մեջ տեղադրված է օպտաթելքե լուսատար, իսկ խողովակների ընդհանուր կետը միակցված է փակ խցիկի: Խցիկում տեղադրված է առաջին ֆոտոդիոդը: Համակարգը լրացուցիչ ունի նաեւ տրանզիստոր, որի բազային միացված է առաջին ֆոտոդիոդը, իսկ էմիտեր-կոլեկտոր շղթայում միացված է ռելեներից առաջինը: Հելիոկայանքի վերին մասում, դրա ընդունող մակերեսույթին ուղղահայաց տեղադրված է խողովակ: Խողովակի մեջ տեղադրված օպտաթելքե լուսատարն ուղղված է երկրորդ ֆոտոդիոդին, որին հաջորդաբար միացված է ռելեներից երկրորդը:

Պարզեցվում է համակարգի կառուցվածքը, բարձրացվում են կողմնորոշման ճշգրտությունն ու հուսալիությունը, 1 նկ.:

(51) (2006) (11) 1741 (13) A2
F41G 1/00

(21) P20050065 (22) 18.05.2005
(42) 03.10.2005

(71) Վանիկ Գրիգորի Ադամյան (AM), Գեւորգ Միքայելի Ջայիմջյան (AM), Լեւոն Թումանյի Սանանդյան (AM), Վահան Վանիկի Ադամյան (AM)

(72) Վանիկ Գրիգորի Ադամյան (AM), Գեւորգ Միքայելի Ջայիմջյան (AM), Լեւոն Թումանյի Սանանդյան (AM), Վահան Վանիկի Ադամյան (AM)

(73) Վանիկ Գրիգորի Ադամյան, Գյումրի, 26 Կոմիսարների 82ա (AM), Գեւորգ Միքայելի Ջայիմջյան, Գյումրի, Սանուշյան 231/203 (AM), Լեւոն Թումանյի Սանանդյան, Գյումրի, Տիգրան Մեծի 116/088 (AM), Վահան Վանիկի Ադամյան, Գյումրի, 26 Կոմիսարների 82ա(AM)

(54) Օպտիկամեխանիկական նշանոց

(57) Գյուտը վերաբերում է զենքին եւ կարող է կիրառվել այն նպատակետին նշանառելու գործընթացում:

Նշանոցն ունի իրան, որի վրա ամրակցված են հեռաչափ եւ անկյունաչափ սարքեր: Իրանին կոշտ ամրակցված է քառօղակ մեխանիզմ, որի շուռտվիկները կատարված են իրանի անշարժ հողակապերի շուրջը ճոճվելու, իսկ շարժաթելը՝ հարթզուգահեռ տեղափոխություն կատարելու հնարավորությամբ: Իրանի վերին հողակապին հորիզոնական դիրքով անշարժ ամրակցված է ուղղորդը, ներքեւի հողակապին միակցված են ճոճալծակը եւ կուլիսը, որը սողնակի միջոցով ամրակցված է քառօղակի հանդիպակաց շարժական հողակապի հետ: ճոճալծակը կցորդիչի միջոցով միակցված է շարժաթելին, որի ազատ ծայրը հողակապով միակցված է ուղղորդի երկայնքով տեղաշարժվող սողնակին: Քառօղակի ներքեւի շուռտվիկը իր միջնակետում գտնվող հողակապով եւ լրացուցիչ շարժաթելով միակցված է կցորդիչին:

Քառօղակ մեխանիզմի կողմերը հավասար երկարության են, իսկ լրացուցիչ շարժաթելը դրանցից երկու անգամ կարճ է:

Քառօղակի անկյունագծով անցնող օղակը անշարժ ամրակցվում է զենքի փողին՝ դրա առանցքի ողղությամբ:

Կրճատվում է նշանառության ժամանակը, բարձրացվում է նշանառման ճշգրտությունը, 2 նկ.:

(51) (2006) (11) 1742 (13) A2
G01K 7/00

(21) P20050090 (22) 03.06.2005
(42) 15.09.2005

(71) Նադեռ Ալի (AM), Էրնեստ Վահենի Ղազարյան (AM)

(72) Նադեռ Ալի (AM), Էրնեստ Վահենի Ղազարյան (AM)

(73) Նադեռ Ալի, Երեւան, Բաղյան 10, բն.15 (AM), Էրնեստ Վահենի Ղազարյան, Երեւան, Տպագրիչների 5, բն.19 (AM)

(54) Ջերմաստիճանի տվիչ

(57) Գյուտը վերաբերում է չափիչ տեխնիկայի բնագավառին, մասնավորապես՝ ջերմաստիճանի չափման տվիչներին: Ջերմաստիճանի տվիչը Մ-աձեւ մազանոթային խողովակ է, որի մեջ որպես ջերմազգայուն տարր լցված է էլեկտրոլիտային լուծույթ: Տվիչն ունի ռեզիստոր եւ էլեկտրոդներ, որոնք տեղակայված են մազանոթային խողովակի երկու ծայրերում: Ռեզիստորի մի ծայրը անմիջապես կանոնադրված է էլեկտրոդների եւ էլեկտրոլիտային լուծույթի միջոցով միացված են փոփոխական հոսանքի սնման աղբյուրին՝ կազմելով փակ էլեկտրական շղթա: Տվիչը տեղակայվում է վերահսկվող միջավայրում: Միջավայրի ջերմաստիճանի փոփոխման ընթացքում փոխվում է էլեկտրոլիտային լուծույթի դիմադրությունը, ինչը բերում է փակ շղթայում հոսանքի մեծության փոփոխմանը: Ռեզիստորի վրա լարման անկումը, որը գրանցվում է չափիչ սարքերի միջոցով, ուղիղ համեմատական է չափվող ջերմաստիճանի արժեքին:

Պարզեցվում է տվիչի կառուցվածքը, բարձրացվում է զգայունությունը, 1 նկ.:

(51) (2006) (11) 1743 (13) A2
G01L 5/20
(21) P20050121 (22) 06.07.2005
(42) 15.09.2005

(71) Նորիկ Ավետիսի Բազիկյան (AM), Վլադիմիր Էմիլի Մարգարյան (AM), Կարո Զակոբի Մոսիկյան (AM)

(72) Նորիկ Ավետիսի Բազիկյան (AM), Վլադիմիր Էմիլի Մարգարյան (AM), Կարո Զակոբի Մոսիկյան (AM)

(73) Նորիկ Ավետիսի Բազիկյան, Երեւան, Մանթաշյան 4/5, բն. 7 (AM), Վլադիմիր Էմիլի Մարգարյան, Երեւան, Թումանյան 32/1, բն. 4 (AM), Կարո Զակոբի Մոսիկյան, Երեւան, Ռաֆֆու 93, բն. 60 (AM)

(54) Ավտոմոբիլի ուղղորդ անիվներն ապակայունացնող կողային ուժերի չափման սարք

(57) Սարքն ունի ավտոմոբիլի առջեւի կամրջակին ամրակցվող իրան եւ ավտոմոբիլի ուղղընթաց ուղղությանն ուղղահայաց առանցքով իրանի մեջ շարժվելու հնարավորությամբ զսպանակված չափիչ գլխիկ, որը չափման ընթացքում գտնվում է ավտոմոբիլի առջեւի անիվի եւ էլեկտրական

չափիչ հանգույցի հետ կինեմատիկական կապի մեջ: Չափիչ գլխիկն իր ծայրին ունի եղանակի մեջ ազատ պտտվելու հնարավորությամբ հոլովակ, որը նշված զսպանակի ուժով հպված է ավտոմոբիլի կողային մակերեսին:

Բարձրացվում է չափման ճշգրտությունը, 1 նկ.:

(51) (2006) (11) 1744 (13) A2
G01L 9/16
(21) P20050150 (22) 09.08.2005
(42) 15.09.2005

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Արսեն Անդրանիկի Ղամբարյան (AM), Արթուր Անդրանիկի Ղամբարյան

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Ծնշման մագնիսաճկուն կերպափոխիչ

(57) Գյուտը վերաբերում է չափողական տեխնիկային, մասնավորապես՝ կերպափոխիչներին, որոնց աշխատանքի սկզբունքը հիմնված է մագնիսական նյութի մագնիսական հատկությունների փոփոխման վրա:

Կերպափոխիչն ունի ճկման դեֆորմացիայով աշխատող մագնիսաճկուն նյութից պատրաստված միջուկ, դրա վրա քառակուսու զագաթներով անցնող չորս անցք եւ անկյունագծորեն հակադիր անցքերով անցնող մագնիսացման եւ չափիչ փոխուղղահայաց փաթույթներ: Միջուկը պատրաստված է միմյանց կոշտ ամրակցված երկու թիթեղից՝ ծնիչի ուղղությամբ զիզգագ բացակ ունեցող սնամեջ գլանի տեսքով, ընդ որում գլանի բացակին ճիշտ հանդիպակաց մասում միջուկը կազմող գլաններից մեկի վրա կա քառակուսի անցք, որի զագաթներով անցնում են մյուս՝ գլանի վրա փոխուղղահայաց փաթույթների չորս անցքերը:

Բարձրացվում է կերպափոխիչի զգայունությունը, ընդլայնվում են ֆունկցիոնալ հնարավորությունները, 3 նկ.:

(51) (2006) (11) 1745 (13) A2
G01M 17/007
(21) P20050115 (22) 28.06.2005
(42) 15.09.2005

(71) Նորիկ Ավետիսի Բազիկյան (AM), Վլադիմիր Եմիլի Սարգսյան (AM), Կարո Յակոբի Մոսիկյան (AM)
 (72) Նորիկ Ավետիսի Բազիկյան (AM), Վլադիմիր Եմիլի Սարգսյան (AM), Կարո Յակոբի Մոսիկյան (AM)
 (73) Նորիկ Ավետիսի Բազիկյան, Երեւան, Մանթաշ-յան 4/5, բն. 7 (AM), Վլադիմիր Եմիլի Սարգսյան, Երեւան, Թումանյան 32/1, բն. 4 (AM), Կարո Յակոբի Մոսիկյան, Երեւան, Րաֆֆու 93, բն. 60 (AM)
 (54) Ավտոմոբիլի ղեկային վարման համակարգի տեխնիկական վիճակի ստուգման սարք
 (57) Սարքը կազմված է երկու տարրից, որոնցից առաջինը ստուգման ընթացքում անշարժ է, իսկ երկրորդը՝ առաջինի նկատմամբ շարժուն: Տարրերից մեկի վրա ամրակցված է սլաք, իսկ մյուսի վրա՝ չափման սանդղակ: Տարրերը միմյանց նկատմամբ դիրքավորված են այնպես, որ երբ ուղղորդ անիվների դիրքը համապատասխանում է ավտոմոբիլի ուղղագիծ շարժմանը, սլաքը կանգնած է սանդղակի 0-ական նիշի դիմաց: Տարրերը կատարված են սկավառակի ձեւով եւ հորիզոնական դիրքում իրար համառանցք տեղակայված են ավտոմոբիլի անիվի տակ՝ գետնին, ընդ որում ստորին անշարժ սկավառակը, որպես իրան, ունի ուղղաձիգ առանցքային փորակ, իսկ վերին սկավառակը՝ փորակի տրամագծին համապատասխան ելուստ:

Ապահովվում է ավտոմոբիլի ուղղորդ անիվների ազատ դարձի անկյան լիարժեք չափում ավտոմոբիլի բնական շահագործմանը առավելագույն նմանակված վիճակում, 1 նկ.:

(51) (2006) (11) 1746 (13) A2
 G01M 17/007
 (21) P20050116 (22) 28.06.2005
 (42) 15.09.2005
 (71) Նորիկ Ավետիսի Բազիկյան (AM), Վլադիմիր Եմիլի Սարգսյան (AM), Կարո Յակոբի Մոսիկյան (AM)
 (72) Նորիկ Ավետիսի Բազիկյան (AM), Վլադիմիր Եմիլի Սարգսյան (AM), Կարո Յակոբի Մոսիկյան (AM)
 (73) Նորիկ Ավետիսի Բազիկյան, Երեւան, Մանթաշ-յան 4/5, բն. 7 (AM), Վլադիմիր Եմիլի Սարգսյան, Երեւան, Թումանյան 32/1, բն. 4 (AM), Կարո Յակոբի Մոսիկյան, Երեւան, Րաֆֆու 93, բն. 60 (AM)
 (54) Ավտոմոբիլի ղեկային վարման համակարգի տեխնիկական վիճակի գնահատման եղանակ
 (57) Ըստ հայտարկվող եղանակի չափում են ղեկային վարման մեխանիզմի, արորիկի ծխնու, երկայնական եւ լայնական ձգածողերի ծխնիների բացակներով պայմանավորված ազատ

դարձի անկյունը: Յամակարգի տեխնիկական վիճակի գնահատումը կատարում են ղեկանիվի սեւեռակման պայմաններում, ուղղորդ անիվների անմիջական դարձի միջոցով, որի ընթացքում ազատ դարձի անկյունը լրացուցիչ պայմանավորված է սռնացքերի վռանների, հեծանի անցքերի, անիվների ամրակցման կոնաձեւ առանցքակալների եւ անվակունդի ամրակցման ձեւավոր տափօղակների ու թագաձեւ մանեկների բացակներով: Գնահատման ընթացքում չափում են ազատ դարձի գումարային անկյունը:

Ապահովվում է ղեկային վարման եւ ուղղորդ անիվների կինեմատիկական շղթայի տեխնիկական վիճակի համալիր գնահատում, 1 նկ.:

(51) (2006) (11) 1747 (13) A2
 G01N 27/02
 (21) P20050136 (22) 28.07.2005
 (42) 15.09.2005
 (71) Արսեն Զավենի Ադամյան (AM), Զավեն Նիկոլայի Ադամյան (AM), Վլադիմիր Միքայելի Յարուբյունյան (AM)
 (72) Արսեն Զավենի Ադամյան (AM), Զավեն Նիկոլայի Ադամյան (AM), Վլադիմիր Միքայելի Յարուբյունյան (AM), Արծրուն Յովհաննեսի Առաքելյան (AM), Զոն Տուրներ (US), Կենեկ Տուրյան (US)
 (73) Արսեն Զավենի Ադամյան, Երեւան, Օրբելի եղբայրների 6, բն. 34 (AM), Զավեն Նիկոլայի Ադամյան, Երեւան, Օրբելի եղբայրների 6, բն. 34 (AM), Վլադիմիր Միքայելի Յարուբյունյան, Երեւան, Նալբանդյան 17, բն. 18 (AM)
 (54) Նանոբյուրեղային բարակթաղանթային ջրածնի տվիչի ստացման եղանակ
 (57) Ըստ հայտարկվող եղանակի տակդիրի հակադիր մակերեւույթների վրա նստեցնում են մետաղական ջեռուցիչ եւ մետաղական սանրածեւ էլեկտրոդներ: Էլեկտրոդների շերտի վրա առաջացնում են անագի երկօքսիդի նանոբյուրեղային մասնիկներից կազմված գազազգայուն բարակ թաղանթ: Ջեռուցիչի եւ սանրածեւ էլեկտրոդների ստեղծումը կատարում են երկփուլ, որոնց ընթացքում մետաղական շերտի ստանալուց հետո կատարում են մետաղական շերտի էլեկտրաքիմիական աճեցում, իսկ ջրածնազգայուն բարակ թաղանթի ստեղծման համար վերցնում են նատրիումի ստանատի եւ ֆոսֆորական թթվի փոխազդեցությամբ ստացված եւ էլեկտրադիալիզով մաքրված զուլ:

Բարձրացվում է տվիչի զգայունությունը, իջեցվում են աշխատանքային ջերմաստիճանները, 4 նկ.:

- (51) (2006) (11) 1748 (13) A2
G01N 33/49
- (21) P20050093 (22) 09.06.2005
(42) 12.07.2005
- (71) «Ճառագայթային ուռուցքաբանության եւ ռադիոլոգիայի հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն (AM)
- (72) Սամվել Կարապետի Քարամյան (AM), Չայրապետ Մեսրոպի Գալստյան (AM), Թաթուլ Շոպենի Սաղաթելյան (AM), Ներսես Սամվելի Քարամյան (AM)
- (73) «Ճառագայթային ուռուցքաբանության եւ ռադիոլոգիայի հայկական ասոցիացիա» Հասարակական կազմակերպություն, Երեւան, Շարուրի 17, բն. 27 (AM)

- (54) Ուռուցքաբանական հիվանդների մոտ մետաստազավորման հավանականության կանխորոշման եղանակ
- (57) Գյուտը վերաբերում է հիվանդի արյան հետազոտմանը եւ կարող է կիրառվել առանց շաքարային դիաբետի մշակման ուռուցքաբանական հիվանդների մոտ մետաստազավորման հավանականության կանխորոշման համար:

Հիվանդի արյան մեջ որոշում են գլյուկոզի մակարդակը անոթի վիճակում, գլյուկոզի ընդունելուց մեկ ժամ եւ երկու ժամ հետո: Ըստ ստացված արդյունքների կառուցում են գլյուկոզի նկատմամբ տոլերանտության կոր եւ եթե կորը ունի աստիճանաձեւ աճող տեսք, ապա կանխորոշում են մետաստազավորման հավանականության բարձր աստիճան:

Բարձրացվում է մետաստազավորման հավանականության կանխորոշման արդյունավետությունը:

- (51) (2006) (11) 1749 (13) A2
G01R 19/00
- (21) P20050127 (22) 14.07.2005
(42) 15.09.2005
- (71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն (AM)
- (72) Բորիս Մամիկոնի Մամիկոնյան (AM), Խորեն Բորիսի Մամիկոնյան (AM), Արշակ Սեդրակի Շաղազանյան (AM)

- (73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)
- (54) Հաստատուն հոսանքի չափիչ
- (57) Գյուտը վերաբերում է չափիչ տեխնիկայի բնագավառին, մասնավորապես՝ հաստատուն էլեկտրական հոսանքների անհպակ չափիչներին, եւ կարող է կիրառվել էլեկտրաչափիչ աքցաններում:

Հաստատուն հոսանքի չափիչն ունի հոսանքատար հաղորդիչն ընդգրկող մագնիսական տարր՝ իր փաթույթով, լարման չափիչ, գործության ուժեղարար, որի մուտքային սեղմակների միջեւ հաջորդաբար միացված են փոփոխական լարման սնման աղբյուրը եւ մագնիսատարի փաթույթը, հետադարձ կապի շղթայում՝ ռեզիստորը, իսկ ուղիղ մուտքի հողանցված սեղմակի եւ ելքային սեղմակի միջեւ լարման չափիչը:

Բարձրացվում է չափման ճշգրտությունը, 1 նկ.:

- (51) (2006) (11) 1750 (13) A2
G01R 19/00
- (21) P20050126 (22) 14.07.2005
(42) 15.09.2005
- (71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն (AM)
- (72) Բորիս Մամիկոնի Մամիկոնյան (AM), Խորեն Բորիսի Մամիկոնյան (AM), Արշակ Սեդրակի Շաղազանյան (AM)
- (73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)
- (54) Հաստատուն հոսանքի չափիչ
- (57) Գյուտը վերաբերում է էլեկտրաչափողական տեխնիկային, մասնավորապես՝ հաստատուն էլեկտրական հոսանքների անհպակ չափիչներին:

Չափիչն ունի հոսանքատար հաղորդիչն ընդգրկող մագնիսատար, փոփոխական լարման սնման աղբյուր, մագնիսատարի վրա տեղադրված փաթույթ, ռեզիստոր եւ լարման չափիչ: Հոսանքի չափիչը լրացուցիչ ունի գործության ուժեղարար, որի մուտքային սեղմակների միջեւ հաջորդաբար միացված են փոփոխական լարման սնման աղբյուրը եւ ռեզիստորը: Ուժեղարարի հետադարձ կապի շղթայում միացված է մագնիսատարի փաթույթը, իսկ ուժեղարարի ուղիղ մուտքի հողանցված սեղմակի եւ ելքային սեղմակի միջեւ միացված է լարման չափիչը:

Բարձրացվում է հաստատուն հոսանքի չափման ճշգրտությունը, 1 նկ.:

-
- (51) (2006) (11) 1751 (13) A2
G01R 27/02
- (21) P20050092 (22) 09.06.2005
(42) 12.07.2005
- (71) Ռադիկ Քրոմոյան (AM), Արմեն Մարկոսյան (AM)
- (72) Ռադիկ Քրոմոյան (AM), Արմեն Մարկոսյան (AM)
- (73) Ռադիկ Քրոմոյան, Երեւան, Հանրապետության 24, բն. 5 (AM), Արմեն Մարկոսյան, Երեւան, Աղբյուր Սերոբի 11/1, բն. 48 (AM)
- (54) Նյութերի տեսակարար դիմադրության չափման եղանակ
- (57) Ըստ հայտարկվող եղանակի չափվող նյութից պատրաստում են նմուշ, որը տեղադրում են

ինդուկտիվության կոճի մագնիսական շղթայում եւ կոճի ինդուկտիվության փոփոխությամբ որոշում դիմադրությունը: Նմուշին տալիս են օղակի ձեւ եւ տեղադրում են Մ-աձեւ իմպուլսային տրանսֆորմատորի երկրորդային փաթույթ ունեցող անշարժ մագնիսական շղթայում: Շարժական միջուկով փակում են մագնիսական շղթան: Չափում են ինդուկտիվաժ լարման մեծությունը, այնուհետեւ հեռացնում են նմուշը, վերականգնում են մագնիսական շղթայում առկա մեկ գալարանոց փաթույթը շունտավորված փոփոխական դիմադրություն ունեցող ռեզիստորով:

Ապահովում են ելքի նույն լարման մեծությունը, որից հետո չափում են փոփոխական ռեզիստորի դիմադրությունը, որը հավասար է չափվող օղակաձեւ նմուշի դիմադրությանը:

**ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ**

**Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական
տվյալների նույնականացման միջազգային
կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

- 11 արտոնագրի համարը
 - 13 փաստաթղթի տեսակի կոդը
U օգտակար մոդելի արտոնագիր
 - 21 հայտի համարը
 - 22 հայտի ներկայացման թվականը
 - 23 լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
 - 31 առաջնային հայտի համարը
 - 32 առաջնային հայտի ներկայացման թվականը
 - 33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
 - 45 օգտակար մոդելի արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
 - 51 միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
 - 54 օգտակար մոդելի անվանումը
 - 56 տեղեկատվության աղբյուրներ
 - 57 ռեֆերատը
 - 62 ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
 - 71 հայտատուն, երկրի կոդը
 - 72 օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
 - 73 արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
 - 74 արտոնագրային հավատարմատար
 - 85 միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
 - 86 միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
 - 87 միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը
-

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) (2006) (11) 101 (13) U
A47G 21/00
(21) U20050212 (22) 05.12.2005
(71) Մանուկ Մարգարյան (AM)
(72) Մանուկ Մարգարյան (AM)
(73) Մանուկ Մարգարյան, Երեւան, Վահր. Փա-
փազյան փող., 2-րդ նրբ., 133 (AM)
(54) Ընպելիքի փողածողիկ
(57) Օգտակար մոդելը վերաբերում է սեղանի
պարագաներին:

Ընպելիքի փողածողիկի ծայրերից մեկն ունի ծալքավոր հատվածամաս, իսկ մյուս ծայրը գալարակաձեւ է եւ տեղադրված է ջրով լցված հերմետիկ պատիճի մեջ: Գալարակի ծայրը դուրս է բերված պատիճից: Պատիճի ջուրը սառեցնում է:

Հոսելով սառույցի մեջ գտնվող գալարակի միջով, ընպելիքը սառչում է, 2 նկ.:

(51) (2006) (11) 102 (13) U
A63B 22/00
A63B 23/00
(21) U20050161 (22) 23.08.2005
(71) «Բնաբուժություն» ՍՊԸ (AM)
(72) Անդրանիկ Ոսկանյան (AM), Վարուժան Ոսկան-
յան (RU)
(73) «Բնաբուժություն» ՍՊԸ, Երեւան, Աբովյան
34ա, բն. 57 (AM)
(54) Բժշկական վարժասարք
(57) Օգտակար մոդելը վերաբերում է վարժասարքե-
րին, մասնավորապես՝ ոտնաթաթերի մերսման, հենաշարժական ապարատի, սրտանոթային համակարգի գործունեության կարգավորման եւ զանազան հիվանդությունների կանխարգելման եւ բուժման համար նախատեսված վարժասար-
քերին:

Բժշկական վարժասարքն ունի անշարժ հենա-
րան, նրա վրա տեղակայված անվերջ ժապավեն կողածռվածքներով օղակաձեւ ուղու տեսքով, եւ առնվազն մեկ հենարանային տարր մարզվողի ձեռքերի համար: Ուղին իր շրջանագծով բաժանված է հանովի գուշի ձեւով իրականացված սեկտորների, որոնցից առնվազն մեկի տարողությունը լցված է ծովային ավազով, մնացած սեկտորներից առ-

նվազն մեկը լցված է ծովային ավազով եւ Առինջ Ավանի հանքավայրի բնական քարաղի խտացված լուծույթով: Մյուս սեկտորները լցված են ծովային մանրաքարերով եւ/կամ ծովային ճալաքարերով: Վարժասարքի վերին մասում տեղակայված են ուղու տաքացման տարրեր: Օղակաձեւ ուղին կատարված է իր առանցքի շուրջը պտտվելու հնարավորությամբ:

Պարզեցվում է սարքի կառուցվածքը, 2 նկ.:

(51) (2006) (11) 103 (13) U
B02C 18/06
(21) U20060008 (22) 23.01.2006
(71) Կառլոս Հակոբի Պետրոսյան (AM)
(72) Կառլոս Հակոբի Պետրոսյան (AM)
(73) Կառլոս Հակոբի Պետրոսյան, Երեւան,
Ծովակալ Իսակովի 52/4, բն. 25 (AM)
(54) Էլեկտրական մսաղաց
(57) Օգտակար մոդելը վերաբերում է տարբեր նյու-
թերի մանրացման սարքերին, մասնավորապես՝
էլեկտրական մսաղացներին:

Մսաղացն ունի սնամեջ հորիզոնական գլա-
նային իրան, որն իր ներքին մակերեսույթի վրա
առանցքի երկայնքով ունի ուղղորդիչ պտուտա-
կաձեւ ակոսիկներ: Իրանի մի ծայրամասում կա
բեռնման անցք, որն ունի ուղղաձիգ խողովակա-
նոստ, որով միակցվում է ուղղաձիգ տեղակայված եւ
հրիչ ունեցող բունկերին, իսկ մյուս ծայրամասում՝
արտաքին պարուրակ, ընդ որում հորիզոնական
սնամեջ իրանի մեջ դրան համառանցք տեղա-
դրված է մատուցիչ պտուտակրիչ, որը բունկերի
կողմից միակցված է իրեն պտույտ հաղորդող
մեխանիկական շարժաբերին: Շարժաբերը կազմ-
ված է դարձափոխային էլեկտրական շարժիչից եւ
դրա լիսեռի հետ համագործակցող միաստիճան
ռեդուկտորից: Պտուտակրիչի վրա մյուս կողմից
տեղակայված է մանգաղաձեւ թիակներով չորս-
թիականի դանակ, որը հպվում է դանակային
վանդակի հետ, որն անշարժ տեղակայված է
հորիզոնական սնամեջ իրանի մեջ: Դանակային
վանդակն իր ամբողջ մակերեսույթի վրա ունի
հատած կոնի տեսքով մեծ հիմքով դեպի դանակը
կողմնորոշված միջանցիկ անցքեր: Վանդակն

ամրացվում է իրանին ճակատային մանեկով:

Ընդլայնվում են մսաղացի հնարավորությունները, բարձրացվում է շահագործման անվտանգությունը եւ երկարակեցությունը, 7 նկ.:

- | | | |
|--|-----------------|--------|
| (51) (2006) | (11) 104 | (13) U |
| B65D 5/00 | | |
| (21) U20050163 | (22) 31.08.2005 | |
| (71) Գոհարիկ Գարեգինի Ասատրյան (AM) | | |
| (72) Վարդան Վրեժի Մովսիսյան (AM), Գոհարիկ Գարեգինի Ասատրյան (AM) | | |
| (73) Գոհարիկ Գարեգինի Ասատրյան, Երեւան, Տոլստոյի 26 (AM) | | |
| (54) Տուփ | | |
| (57) Օգտակար մոդելը վերաբերում է տարաներին, մասնավորապես՝ սննդամթերք փաթեթավորող տուփերին: | | |

Տուփն ունի հատակ, կողեր եւ երկշերտ կափարիչ: Կափարիչի շերտերից մեկն ունի կտրտված փազլ պատկերներ: Մի դեպքում փազլ պատկերները կտրտված են կափարիչի արտաքին շերտի վրա եւ ծածկված են պաշտպանիչ շերտով: Մյուս դեպքում փազլ պատկերները կտրտված են կափարիչի ներքին շերտի վրա, ծավալային են եւ ունեն երաժշտական չիփ:

Լայնացվում են տուփի ֆունկցիոնալ հնարավորությունները, 2 նկ.:

- | | | |
|---|-----------------|--------|
| (51) (2006) | (11) 105 | (13) U |
| B65D 41/04 | | |
| B65D 43/00 | | |
| (21) U20050134 | (22) 25.07.2005 | |
| (71) «Յու եւ Ս» ՍՊԸ (AM) | | |
| (72) Յուրիկ Աղամիրյան (AM) | | |
| (73) «Յու եւ Ս» ՍՊԸ (AM) | | |
| (74) Ա. Գալոյան | | |
| (54) Շշի խցանման հանգույց | | |
| (57) Շշի խցանման հանգույցն ունի ներքին մակերեսային վրա երկայնական ելուններով գլանաձեւ ականոց, կափարիչ, որն ունի ներքին պարուրակ եւ օղակաձեւ կողի տեսքով խցանիչ միջադիր վերին հատվածամասի վրա, արտաքին պարուրակով եւ գլանաձեւ ականոցին սեւեռակման համար ներքին կցաշուրթով լցման տարր, որը կազմված է ներքին հեղուկաթափ եւ արտաքին ամրակապման խողովակառստերից, | | |

դրանք միակցող կոնաձեւ հատվածամասից, ընդ որում հեղուկաթափ խողովակառստն ունի սկավառակաձեւ սահմանափակիչ: Սահմանափակիչը երեք միջակապերի միջոցով ամրակցված է խողովակառստի ներքին մակերեսային, միջակապերը կազմում են ճեղքավոր անցքեր: Սահմանափակիչը եւ ամրակապման խողովակառստի վերին եզրը գտնվում են հեղուկաթափ խողովակառստի վերին եզրից ներքեւ, իսկ հեղուկաթափ խողովակառստի ստորին եզրը գտնվում է ամրակապման խողովակառստի ստորին եզրից ներքեւ: Գլանաձեւ ականոցի ներքին մակերեսային վրա գոյություն ունի լցման տարրի ներքին կցաշուրթին համապատասխանող օղակաձեւ ակոսիկ, իսկ շշի բկանցքի վրա խցանման հանգույցի լրացուցիչ կոշտ սեւեռակման համար ամրակապման խողովակառստի ներքին մակերեսային ստորին եզրին եւ լցման տարրի կոնաձեւ հատվածամասի ներքին մակերեսային հիմքին գոյություն ունեն օղակաձեւ ելուններ:

Պարզեցվում է կառուցվածքը, լայնացվում է շշերի խցանման միջոցների տեսականին, 1 նկ:

- | | | |
|--|-----------------|---------|
| (51) (2006) | (11) 106 | (13) U |
| B65D 49/00 | | |
| (21) U20050158 | (22) 16.08.2005 | |
| (31) 2005118066 | (32) 14.06.2005 | (33) RU |
| (71) Օբշչեստվոյ ս Օգրանիչեննոյ Օտվետստվեննոստյու «Գլետչեր Ինվեստ» (RU) | | |
| (72) Պրոգուսենչիկով Անդրեյ Բորիսի (RU) | | |
| (73) Օբշչեստվոյ ս Օգրանիչեննոյ Օտվետստվեննոստյու «Գլետչեր Ինվեստ» (RU) | | |
| (74) Յ. Դավթյան | | |
| (54) խցանման սարք | | |
| (57) Օգտակար մոդելը վերաբերում է շշերի խցանման սարքերին: | | |

Սարքն ունի ներքին մակերեսային ատամներ եւ սեւեռման օղակաձեւ ելուստներ ունեցող իրան, հեղուկաթափ ականոց, որն ունի փեշ, որի արտաքին մակերեսային վրա կան օղակաձեւ ելուստներ: Սարքն ունի սնամեջ գլանի տեսք ունեցող փական, որն արտաքին մակերեսային ունի խցարար օղակաձեւ ելուստներ, փականային տարր եւ հեղուկաթափ ականոցի վրա պարուրակային միացքի միջոցով տեղակայված կափարիչ: Կափարիչն ունի ներքին կողմնային մակերեսային վրա պարուրակ եւ ճակատին խորացում ունեցող ներքին թասակ, փականային օղակ եւ արտաքին թասակ, որոնք

ունեն երկայնական փորակների տեսքով միմյանց հետ սեւեռման միջոցներ: Արտաքին թասակը վերին ճակատի ներքին մակերեւոյթի վրա ունի բազմանիստ սնամեջ ելուստ, որը տեղակայված է վերոհիշյալ խորացման մեջ: Արտաքին թասակն ունի բաժակի ձեւ ունեցող լրացուցիչ թասակ, որի հատակի արտաքին մակերեւոյթի վրա կա բազմանիստ ելուստ, որը համընկնում է փոխազդում է արտաքին թասակի՝ դեպի նրա ստորին ճակատի կողմն ուղղված բազմանիստ ելուստի հետ:

Ապահովվում է շշերի խցանման հուսալիւթայան բարձրացումը, 14 նկ.:

-
- (51) (2006) (11) 107 (13) U
E04H 6/12
 - (21) U20050217 (22) 12.12.2005
 - (71) «Բնաբուժություն» ՍՊԸ (AM)
 - (72) Անդրանիկ Ոսկանյան (AM), Վարուժան Ոսկանյան (RU)
 - (73) «Բնաբուժություն» ՍՊԸ, Երեւան, Աբովյան 34ա, բն. 57(AM)
 - (54) Կարուսելային տիպի ավտոկայանատեղ
 - (57) Օգտակար մոդելը վերաբերում է ավտոմեքենաների կայանատեղերի կառուցվածքներին:

Ավտոկայանատեղն ունի անշարժ հենարան, որի վրա տեղակայված է հորիզոնական կրող լիսեռ: Կրող լիսեռի վրա պտտվելու հնարավորությամբ տեղակայված է պահող հիմնակմախք, որի պարագծով ամրակցված են ավտոմեքենաների տեղավորման համար հենահարթակ ունեցող բոքսեր, ավտոմեքենայի մուտքի եւ ելքի համար առնվազն մեկ հարթակ: Բոքսերը կատարված են իրար հետ ամրակցված գլանաձեւ պահունակների տեսքով, որոնց ներքին մակերեւոյթի պարագծով կան առնվազն երկու շարք գլորման հոլովակներ: Յուրաքանչյուր պահունակի ներքեւի մասում, հոլովակների վրա գլորման հնարավորությամբ տեղակայված է ջրով լցված սեզմենտաձեւ տարողութայան տեսք ունեցող բալաստ, որն ունի ավտոմեքենայի տեղավորման համար հենահարթակ ծառայող վերին մակերեւոյթ, իսկ տարողություններն ունեն ջրի թափման եւ հետադարձ վերամղման հնարավորություն:

Փոքրացվում են եզրաչափերը, մեծացվում է տարողությունը, 3 նկ.:

- (51) (2006) (11) 108 (13) U
F04D 25/00
- (21) U20060014 (22) 31.01.2006
- (71) Կառլոս Յակոբի Պետրոսյան (AM)
- (72) Կառլոս Յակոբի Պետրոսյան (AM)
- (73) Կառլոս Յակոբի Պետրոսյան, Երեւան, Ծովակալ Իսակովի 52/4, բն. 25 (AM)
- (54) Առանցքային օդափոխիչ
- (57) Օգտակար մոդելը վերաբերում է օդափոխիչների եւ կարող է օգտագործվել մարդկանց ու կենդանիներ պատկերող փչովի տիկնիկների փչման եւ դրանց շարժում հաղորդելու համար:

Առանցքային օդափոխիչն ունի հիմքի վրա տեղադրված գլանային իրան, որի մեջ համառանցք տեղադրված է էլեկտրաշարժիչ, որն ամրակցված է իրանին երեք հենարանային ձողերի միջոցով: Էլեկտրաշարժիչի լիսեռի վրա նստեցված են թիակներ: Իրանը տեղադրված է հիմքի վրա իր լայնական առանցքի շուրջը մինչեւ 120 աստիճան անկյան տակ շրջվելու եւ տրված դիրքում պտուտակների օգնությամբ սեւեռակման հնարավորությամբ: Իրանի վերին կողաճակատին ամրակցված է գլանային գլխադիր, որի արտաքին գլանային մակերեւոյթի վրա՝ գլխադրի վերին կողաճակատի ծայրամասի մոտ ամրակցված է 60-80 մմ լայնություն ունեցող “կաշուկ” տեսակի ժապավեն: Գլանային գլխադրի վերին կողաճակատի վրա տեղադրված է հարթ մետաղական ցանց, իսկ իրանի ստորին կողաճակատին ամրակցված է կոնաձեւ մետաղական ցանց:

Ընդլայնվում է առանցքային օդափոխիչների կիրառման բնագավառը, 2 նկ.:

-
- (51) (2006) (11) 109 (13) U
F04F 7/00
 - (21) U20060007 (22) 23.01.2006
 - (71) Կառլոս Յակոբի Պետրոսյան (AM)
 - (72) Կառլոս Յակոբի Պետրոսյան (AM)
 - (73) Կառլոս Յակոբի Պետրոսյան, Երեւան, Ծովակալ Իսակովի 52/4, բն. 25 (AM)
 - (54) Էլեկտրամագնիսական թրթռական պոմպ
 - (57) Օգտակար մոդելը վերաբերում է էլեկտրատեխնիկային եւ կարող է օգտագործվել հորատանցքերից ջրի վերհանման համար: Էլեկտրամագնիսական թրթռական պոմպն ունի իրան, որի վերին հատվածամասում տեղակայված է էլեկտրամագնիսական տատանակ՝ մագնիսա-

պարփակիչով եւ փաթույթով, որի խարիսխը մխոցակոթի միջոցով միակցված է տատանվող լողաթելի ձեւ ունեցող մխոցի, մեղմիչի եւ դիաֆրագմայի հետ: Մագնիսապարփակիչը Մ-ձեւ միջաձող է, որի յուրաքանչյուր ճյուղի վրա նստեցված է կոճ, ընդ որում յուրաքանչյուր կոճը կազմված է պլաստմասսայե հիմնակմախքից եւ արտանցիչներով փաթույթից: Յուրաքանչյուր կոճի փաթույթը մեկուսապատված է: Պոմպն ունի կափարիչ՝ այնտեղ տեղակայված ճնշման խցով եւ կափարիչի ստորին հատվածամասում իրականացված ու ներթողման կափույրով փակվող ներթողման անցքերով: Իրանի վերին հատվածամասում տեղակայված է արտաթողման խողովակաուստ: Մագնիսապարփակիչի եւ նրա խարիսխի հատույթների մակերեսները մեծացված են 20-30 տոկոսով, իսկ փաթույթի գալարների քանակը 440 է: Հիմնակմախքի վրա փաթաթված կոճերը մագնիսապարփակիչի վրա նստեցնելուց առաջ տոգորում են էլեկտրամեկուսիչ լաքով: Իրանը մագնիսապարփակիչի վերին մակարդակի չափով բոլոր կողմերից լցված է էպօքսիդային խեժով:

Բարձրացվում է արտադրողականությունը եւ աշխատանքի հուսալիությունը, 2 նկ.:

- (51) (2006) (11) 110 (13) Ս
H02K 5/12
- (21) U20060015 (22) 02.02.2006
- (71) Կառլոս Հակոբի Պետրոսյան (AM)
- (72) Կառլոս Հակոբի Պետրոսյան (AM)
- (73) Կառլոս Հակոբի Պետրոսյան, Երեւան, Ծովակալ Իսակովի 52/4, բն. 25 (AM)
- (54) Սուզովի էլեկտրաշարժիչ
- (57) Օգտակար մոդելը վերաբերում է էլեկտրական մեքենաներին եւ կարող է օգտագործվել որպես կենտրոնախույս սուզապոմպերի շարժաբեր:

Սուզովի էլեկտրաշարժիչն ունի երկարացված չժանգոտվող պողպատից պատրաստված գլանաձեւ իրան, որի մեջ տեղակայված է ստատորի մագնիսապարփակիչը՝ իր մեջ տեղադրված փաթույթներով, եւ լիսեռ, որի վրա տեղակայված է կարճ միակցված ռոտորը: Գլանաձեւ իրանի ստորին հատվածամասում գտնվում է ստորին կափարիչը խցանի հետ, իսկ իրանի վերին հատվածամասում՝ վերին կափարիչը հոսանքի

ներանցիչով: Լիսեռը տեղադրված է սափքի առանցքակալներում, որոնք ամրակցված են առանցքակալների վահաններում: Վերին կափարիչի կողմից լիսեռը հերմետիկացված է ճակատային խցվածքով, որը կազմված է լիսեռի վրա նստեցված եւ նրան ամրակցված շարժուն տարրից, որն իրականացված է իր կողաճակատին օղակաձեւ փորակ ունեցող ավազատետիչի տեսքով, եւ առանցքակալի վահանին կոշտ ամրակցված անշարժ տարրից՝ օղակաձեւ ելուն ունեցող ականոցի տեսքով, ընդ որում ելունը օղային բացակով մտնում է ավազատետիչի փորակի մեջ:

Բարձրացվում է էլեկտրաշարժիչի երկարակեցությունը եւ հերմետիկությունը, 1 նկ.:

- (51) (2006) (11) 111 (13) Ս
H02K 17/02
- (21) U20060013 (22) 31.01.2006
- (71) Կառլոս Հակոբի Պետրոսյան (AM)
- (72) Կառլոս Հակոբի Պետրոսյան (AM)
- (73) Կառլոս Հակոբի Պետրոսյան, Երեւան, Ծովակալ Իսակովի 52/4, բն. 25 (AM)
- (54) Միաֆազ ասինքրոն էլեկտրաշարժիչ
- (57) Օգտակար մոդելը վերաբերում է էլեկտրամեքենաչինությանը, մասնավորապես՝ փոքր հզորության էլեկտրական մեքենաներին, որոնք նախատեսված են միաֆազ հոսանքից սնվելու համար, եւ կարող է օգտագործվել կենցաղում ու տեխնիկայի տարբեր բնագավառներում:

Էլեկտրաշարժիչն ունի պատյան, ստատոր՝ իր միջուկով ու գրգռման փաթույթով, եւ պտտվող ռոտոր՝ իր միջուկով եւ փաթույթով: Ռոտորն իր պտտման առանցքի երկայնքով ունի փորակներ, որտեղ տեղակայված է փաթույթը: Օգտակար մոդելի համաձայն փորակներն իրականացված են ռոտորի պտտման առանցքի նկատմամբ 7,0-7,5 աստիճան թեքությամբ, իսկ ստատորի փաթույթների բեւեռների քանակը 8-ն է: Էլեկտրաշարժիչն ունի նաեւ դարձափոխային ռեժիմում աշխատելու հնարավորություն:

Բարելավվում են էլեկտրաշարժիչի գործարկման եւ թրթռակուստիկ բնութագրերը, 1 նկ.:

**ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՆՄՈՒՇՆԵՐ**

**Արդյունաբերական նմուշներին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՅԿ ST.80 ստանդարտի**

- 11 *արտոնագրի համարը*
- 13 *փաստաթղթի տեսակի կոդը*
S արդյունաբերական նմուշի արտոնագիր
- 21 *հայտի համարը*
- 22 *հայտի ստացման թվականը*
- 23 *ցուցահանդեսային առաջնության թվականը*
- 24 *թվականը, որից սկսվում է ԴԴ արտոնագրով վերապահված իրավունքների գործողությունը*
- 31 *առաջնային հայտի համարը*
- 32 *առաջնային հայտի ներկայացման թվականը*
- 33 *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը*
- 51 *արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը(ները)*
- 54 *արդյունաբերական նմուշի անվանումը*
- 55 *արդյունաբերական նմուշի պատկերը (զծանկարը, լուսանկարը)*
- 57 *էական հատկանիշների ամբողջությունը*
